

ԼԵՅՍ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ
ՊԼԵՏՏՈՆԱԿԱՆ ԵՐԿԱՄԱՆԹԵՐԹ
ԳԵՆԵՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵԱՆ



ՅՈՒՆՈՒՄ-ՓԵՏՐՈՒՄ

Է. ՏԱՐԻ, ԹԻՒ 3, 2007 (39)

LUYS — Revue bimestrielle


Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՅԱՆԴԻՄԱՆ

Խաժակ Արքեպիսկոպոս

ՄԱՐՄԻՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Բաբգէն եպս. Վարժապետեան

ՅԻՍՈՒՍ ԱՆՈՒՆԻՆ ԻՄԱՍՏԸ

Բաբգէն Թօփճեան

ԳԻՒՄՐԻԻ «ԵՕԹ ՎԷՐՔ»Ը

Արէլ քհնյ. Մանուկեան

ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԸ

Զարեհ եպս. Ազնաւորեան

ՅԱՄԵՅՈՂ ԳԱՐՈՒՆԸ

Յակոբ Արք. Գլնճեան

ՀԱՅԱՍՏԱՆ – ԴՈՒՒ, ԻՄ ԵՐԿԻՐ

Յակոբ Արք. Գլնճեան

LA MÈRE DE DIEU DANS LA LITURGIE ARMÉNIENNE **Thamar Dasnabedian**

Մտորումներ Աստուածայայտնութեան Խորհուրդին յանդիման

«Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Խօսք-բանականութիւնը: Խօսք-բանականութիւնը Աստուած էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց:

Եւ Խօսք-բանականութիւնը մարդացաւ եւ մեր միջեւ բնակեցաւ:

... Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր ստեղծած մարդիկը զինք չընդունեցին:

... Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն կարողութիւնը տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու...»:

(Յովհ. Ա. 1-14 Հատուածներ)

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ - Ս. ԾՆՈՒՆԴ...:

Բառը կ'արտասանենք գրեթէ յուսահատութեամբ, որովհետեւ մեզ շրջապատող իրարանցումին ու ժխորին մէջ այսօր ո՞վ կրնայ իրապէս բացատրել թէ ինչ կը տօնենք եւ կամ թէ ինչ կը նշանակէ մեր օրերուն Աստուածայայտնութիւնը տօնել:

Յստակ է, որ տօնը եւ մեր տօնակատարութիւնները ոչ կազանդի ծառով, ոչ նուէրներով, ոչ ընտանեկան կամ համայնքային խրախճանքներով, ոչ հաճելի ժամանցներով եւ ոչ ալ ուրիշ զգացական սովորութիւններով կ'իմաստաւորուին, որոնց կը նայինք որոշ թերահաւատութեամբ, իսկ տօնական օրերը շրջապատող աղմուկին եւ վաճառականական եռուզերին՝ արդարացի կասկածամտութեամբ:

Տարիներ շարունակ այդ մասին խօսելէ եւ գրելէ ետք, այս միջնորդտին մէջ, կը մտածեմ թէ դիւրին չէ Աստուածայայտնութեան մասին դարձեալ գրելը եւ կը կարծեմ թէ կարդացողներն ալ նոյնը պիտի խորհին:

«Ամէն տարի՝ այս ատէն, քիչ մը Ս. Ծնունդին տրամադրութիւն ստեղծել: Քանի մը ազնիւ ու մարդասիրական խօսքեր ըսել, քանի մը սուղ եւ ծախսալից նուէրներ փոխանակել, վերջը պարտաւոր զգալ շնորհակալութիւն յայտնելու ստացած նուէրներուն համար եւ ապա աշխարհքն ու կեանքը կը շարունակեն իրենց թաւալքը առաջուայ նման՝ անփոփոխ կերպով»: Այսպէս պիտի խորհին շատեր...:

Բայց ոչ հաւատացող Քրիստոնեան:

Աստուածայայտնութեան տօնակատարութիւնը հաւատացեալին համար չի կրնար մակերեսային այս աղմուկն ու եռուզեռը ըլլալ:

Կեանքի մեծագոյն փորձառութիւնները Աստուծոյ կողմէ ընծայուած

չնորհօքներ են, բայց պէտք է գիտնանք, որ զանոնք կը ստանան միայն անոնք՝ որ պատրաստ են զանոնք ընդունելու, այլապէս՝ Լուսաւոր Աստղը կը բարձրանայ իրենց կեանքի երկնակամարին վրայ, բայց անոնք չեն տեսներ անոր լոյսը, որովհետեւ իրենց հոգիներուն աչքերը կոյր են: Կեանքի գերագոյն պահերուն եւ վայելքներուն համար անհրաժեշտ է ինքզինք պատրաստել հոգիով ու մարմնով: Կարելի չէ բախտին կամ ամենօրեայ սովորականութեան ձգել մեր յաւերժական երջանկութիւնն ու յաւետենական կեանքը: Պէտք է պատրաստենք մենք զմեզ:

Պէտք է պատրաստենք մենք զմեզ, պահ մը առանձնանալով մենք մեր եւ Աստուծոյ հետ ու այդ սրտբաց հաղորդակցութիւնէն ետք պիտի կարենանք մեր սիրելիներուն նուիրել ազնիւ, համբերատար, ներողամիտ եւ սիրագեղ սիրտ մը եւ այդ է իսկական նուէրը՝ այդ սիրտը, միւս բոլոր գունագեղ ծրարները անիմաստ ծախսեր են, որ ոչ մէկ կապ ունին Աստուածայայտնութիւն խորհուրդին հետ:

Թոյլ տանք որ Աստուած խօսի մեզի մեր առանձնութեան եւ լուրթեան մէջ, եւ զգանք իր մօտիկութիւնը մեզի: Այս է իսկական խորհուրդը Աստուածայայտնութեան՝ Աստուած մարդացաւ մօտիկ ըլլալու համար մեզի:

Աստուած մարդացաւ....:

Որքան դիւրին է բառերը արտասանելը:

Շատերուն համար՝ այնպէս կը թուի, որ մարդեղութիւնը Աստուծոյ համար լոկ հագուստ փոխելու պէս բան մըն էր: Բայց այդպէս չըսեր Յովհաննէս աւետարանիչը, այդ չըսեր Քրիստոնէական հաւատքը:

Պէտք է իջնել բառերուն խորքը եւ չափել ահաւոր տարողութիւնը ըսուած խօսքերուն:

Աստուած մարդացաւ: Այդ չի նշանակեր որ ան դադրեցաւ Աստուած ըլլալէ՝ ամենագոր եւ փառահեղ ստեղծիչը ըլլալէ:

Բայց այս հաստատումն ու մեր հաւատքը կ'ըսեն թէ իր մարդեղութեամբ Ան եղաւ քեզի եւ ինծի պէս, Պօղոս Առաքեալին բառերով «Ան ինզինքը դատարկեց—մերկացուց իր աստուածային փառքէն» (Փիլպ. Բ. 7)

Քրիստոս իր մարդեղութեամբ կամաւոր կերպով ինքզինքը յանձնեց իր Հօրը կամքին եւ սիրալոյսով կերպով ենթարկուեցաւ Անոր ծրագրին եւ իրեն համար պատրաստած վախճանին:

Այս իսկ է Աստուածայայտնութեան խորհուրդը՝ ինզինքը յանձնել Աստուծոյ կամքին եւ պատրաստ ըլլալ գործադրելու անոր ծրագիրը:

Մարդացեալ Քրիստոսը մեր օրինակն է:

Պէտք է սորվինք իրմէ եւ հետեւինք իր օրինակին եւ նոյն հաւատքով լուսաւորուած, պէտք է գիտնանք թէ մենք կը պատկանինք մէկ հաւաքական ընտանիքի, ուր հակառակութիւնները, Նար եւ Նսիւն պաշտամունքը տեղ չունին, այլ միայն Աչրն ու անձնագործութիւնը, որովհետեւ այդ իսկ է Աստուածայայտնութեան խորհուրդը:

Ինչպէս նշեցինք Քրիստոս Աստուածային բնութիւնը ունենալով՝ հա-

մահաւասարն էր Աստուծոյ, բայց մարդ արարածին համար, ան որոշեց հրա-
ժարիլ այդ փառքէն եւ դառնալ հաւասարը մարդուն, հակադրուելով Ադամին,
որ փորձեց Աստուծոյ հաւասարիլ խարդախութեամբ եւ այդ պատճառով ալ
նուաստացաւ, մինչ ահա Քրիստոս խոնարհեցաւ, ինզիսնքը հաւասարեցուց
հողեղէն եւ մեղապարտ մարդուն, անոր ճակատագրակիցը դարձաւ մինչեւ
մահ, մինչեւ խաչելութիւն՝ դատապարտեալներու մահապատիժը:

Իր այս խոնարհութեան եւ Աստուծոյ կամքին ինքնուրաց կերպով են-
թարկուելուն համար Աստուած Անոր՝ Քրիստոսի միջոցով նաեւ հաւատաց-
եալներուն վերադարձուց Աստուածային փառքին պատիւը:

Այս իսկ է Աստուածայայտնութեան խորհուրդին իմաստաւորումը:

Աստուած մարդացաւ: Ան եղբայրացաւ մեզի եւ մեզ իրարու եղբայրա-
ցուց: Այսօր Աստուածայայտնութեան այս տօնին, ամէն բանէ աւելի մեր
սրտերուն մէջ կրենք իր եղբայրական սէրը, անձնագոհութիւնը եւ բարու-
թիւնը եւ մեր նմաններուն հանդէպ տածենք նոյն սէրն ու ներողամտութիւնը,
նոյն բարութիւնն ու գոհաբերութեան ոգին: Քրիստոսով մենք կրնանք աւե-
լին ըլլալ քան պարզ հողեղէն ու մահկանացու մարդը:

Նոր Տարուայ եւ Աստուածայայտնութեան օրհնաբաշխ տօներուն առի-
թով յանուն Գանատայի Հայոց Առաջնորդարանի Ազգային Վարչութեան կրօ-
նական ու Քաղաքական ժողովներուն եւ անձնապէս՝ մեր Եկեղեցականաց դա-
սուն, Ազգային Պատգամաւորներուն եւ Նրեսփոխաններուն, Խորհուրդներու
անդամներուն, Եկեղեցիներու Հոգաբարձութեանց եւ Յանձնախումբերու ան-
դամներուն, Եկեղեցիներու պայծառութեան օժանդակող կամաւոր ազգայիննե-
րուն եւ մեր սիրելի ժողովրդեան զաւակներուն կը մաղթենք բարօր եւ երջան-
կալից օրեր, քաջառողջ եւ արեւշատ տարիներ, նորանոր յաջողութիւններ եւ
բարքաւաճութիւն: Աղօթենք մեր Հայրենիքին ու Արցախին, անոնց պետակա-
նութեան, մեր նուիրապետական Աթոռներուն եւ անոնց գահակալներուն եւ
ազգիս Հայոց իրենց ծառայութիւնը բերող բոլոր միութիւններուն եւ ղեկա-
վարներուն՝ անսասնութեան, յաջողութեան եւ արեւշատութեան համար:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ

Առաջնորդ

Գանատայի Հայոց Թեմի

ՄԱՐՄԻՆՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Յիսուսի ժամանակակից կենսագիրներ, չորս Աւետարաններ եւ Առաքելական թուղթեր ոչինչ գրած են Անոր Ֆիզիքականի կամ դէմքի նամանութեան մասին:

1987, Հոռոմ կը գտնուիմ: Բարեկամ կարտինալ մը Վատիկանի թանգարանը տարաւ զիս: Յիսուսի կերպարը նկարագրող հին արձանագրութիւն մը ցոյց տուաւ: Անոր ժամանակակից հոովմէական կայսրութեան լրատու պաշտօնեայ էր Բիւպլիոս Լենտիլոս: Ահա անոր տեղեկագիրը «ոմն Յիսուսի մասին»: Հետեւեալը հարգատ թարգմանութիւնն է:

«Այս օրերուն ոյժեղ նկարագրով մարդ մը յայտնուեցաւ, անունը Յիսուս Քրիստոս, որ մեր մէջ է. հեթանոսներ զինք կ'ընդունին իբր ճշմարտութեան փարոզիչ եւ մարգարէ, բայց իր աշակերտները զինք «Աստուծոյ Որդի» կ'անուանեն»:

«Ան մեռելի մը յարութիւն տուած է, ամէն տեսակ ախտեր կը բժշկէ. հասակաւոր է եւ վայելչագեղ, շատ յարգարժան դէմքով, այնպէս որ զինք դիտողը թէ կը սիրէ եւ թէ երկիւղածօրէն կը պատկառի իրմէ»:

«Անոր մագերը շագանակագոյն են, որ ականջներուն քովէն շիտակ կ'իջնեն վար, եւ ուսերուն մօտ կ'ըլլան գանգուր խոպոպիկներ: Ճակտին կեդրոնէն մագերը երկուքի բաժնուած են, ըստ սովորութեան նագարէքցիներու: Ունի շատ ֆնֆուշ եւ պարզ նակատ մը, դէմքը անարատ է եւ առանց կնկիոյ, գեղեցիկ եւ սիրուն կարմրութեամբ: Իր քիթն ու բերանը այնպէս մը երկնադած՝ որ դժուար է նկարագրել, մօրուքը խիտ, մագերուն գոյնով, ոչ շատ երկար: Նայուածքը անմեղ եւ վնիտ, աչքերը գորշ, արագ եւ յստակ»:

«Երբ կը յանդիմանէ՝ սոսկալի է, խրատած ատեն ազնիւ եւ փայտալիս: Խօսակցութիւնը հանելի է, զգօն եւ հանդարտ: Ոչ ոք կը յիշէ իր խնդալը տեսած ըլլալ, բայց շատեր տեսած են իր լալը»:

Մարկոսի ընթերցողները, հելլէն եւ հեթանոս՝ հրաշքներ գործող Յիսուսը սիրով կ'ողջունեն. մինչ իր անմիջական շրջանակը, ընտանիքը, դպիրներ, մանաւանդ աշակերտները սխալ կը հասկնան զինք, այնպէս որ, անգամ մը «ետիս գնա սատանայ, դուն իմ գայթակղութիւնն ես», ըսաւ Պետրոսի:

Հետաքրքրական է նկատել որ, Մարկոս չի յիշեր ոեւէ մէկը իրեններէն որ ներկայ էր իսաչելութեան: «Աստուած իմ Աստուած իմ, ընդէր թողեր զիս», եւ հեթանոս հարիւրապետը կը խոստովանի. «Արդարեւ Աստուծոյ որդին էր այս մարդը»: Մարկոս հակակրութիւն մը ունի Երուսաղէմի առաջին եկեղեցիի առաջնորդներուն, առաքեալներու դէմ:

Բրօֆ. Գիլլըր քիչ մ'ալ առաջ կ'երթայ ըսելու աստիճան թէ՛ ըստ Մարկոսի առաքեալները հակառակ էին Քրիստոսի մինչեւ Անոր Յարութիւն առնելը:

Մատթէոսի Յիսուսը Իսրայէլի թագաւորն է, սպասուած արքայական Մեսիան, Որդի Աստուծոյ, Դաւթի սերունդէն, պատրաստ մեռնելու իր ժողո-

վուրդդին համար: Որոշ է ուրեմն որ Մատթէոս կը գրէ հրեայ ընթերցողներու համար, եւ այդ է պատճառը որ՝ յաճախ Հին Կտակարանէն մէջբերումներ կը կատարէ. «Այս եղաւ որպէսզի կատարուի Տիրոջ խօսքը որ գրուած է»:

«Ծնունդք իժից» կը կոչէ Փարիսեցիներու եւ դպիրներու խումբը. Յիսուս հրէական կրօնական խստակրօն հաստատութեան շատ հակառակ է: Ըստ Մատթէոսի Յիսուս Նոր Մովսէսն է, ոչ թէ օրէնքը մեկնող ուսքի մը այլ նոր օրէնք տուող եւ լրումն հրէական մարգարէութեան: (Տես Լեւրան Քարոզը):

Ղուկաս կը գրէ զարգացած, սոփեստ ընթերցողներու համար. իր գիրքը հելլէն մշակոյթին յարմարցնելու միտումով: Իր Յիսուսը անմեղ փրկիչն է աշխարհի, լի սիրով եւ ներող ոգիով: Կեանքը օրը օրին, ժամը ժամուն ապրելու դասը կայ հոն: Օրինակ Ղուկաս կը գրէ «Զհաց մեր հանապազօրոյ տուր մեզ այս օր», մինչ Մատթէոս կ'ըսէ «Զհաց մեր այս օր»: Երբ առաջին քրիստոնեաներ գիտցան որ Քրիստոսի Գալուստը անմիջական չէ, պիտի շատ ուշանայ ... Ղուկաս, գործնական յոյն մարդ, բժիշկ եւ հոգեբան 85 թիւին գրեց իր ընթերցողներուն. «Քրիստոնեաներ պէտք է շարունակեն ապրիլ կեանքերին բնականոն ընթացքով», եւ իր պատգամը պատշաճեցուց գործնական այդ սկզբունքին:

Բազմաթիւ ժողովուրդին հակազդեցութիւնը Յիսուսի մէկ հրաշքին առիթով: Ուրախութիւն, հրճուանք կայ ըստ Ղուկասի. ըստ Մատթէոսի՝ հաւատքն է որ կ'արտայայտուի. Մարկոս կը բացատրէ Յիսուսի սքանչելի գօրութիւնը:

Յովհաննէսի Յիսուսը բոլորովին տարբեր է: Ան միայն 7 հրաշքներ կը գործէ. ցաւազարներու բժշկութիւն չի յիշեր: «Նա մարմնացեալ Որդին է Աստուծոյ»: Պէտք չունի Ս. Ծնունդը յիշելու: Խաչին վրայ Ան տէրն է կացութեան: Հոգածու է իր մօրը: Գեթսեմանիի մէջ ծունկի եկած չտագնապիր: Զինք ձերբակալելու եկած զինուորներ ետ ետ մղուելով ծունկի կու գան, եւ խաչին վրայ իսկ գոհ է որ լրիւ կատարած է իր գործը. «Ամենայն ինչ կատարեալ է», ըսելով՝ կ'աւանդէ հոգին:

ԲԱՐԳԷՆ ԵՊՍ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՄ

Անլոյս խաւարը, չարութեան ոգին
Տիրել էր աշխարհ, եւ վաղուց մարդիկ
Ապառաժ սրտով կործանել էին
Խանդավառ զգացման պատկեր գեղեցիկ,
Անցած օրերի մաքուր պարզութիւն
Ապականութեան ասպարէզ դարձած,
Էլ չէր կարմրում նենգամտութիւն,
Առաքինութեան փառքն էր շիջած...

Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի,
Եւ Բեթղեհեմից նոր արեւ ծագեց,
Այրից առաջին ճիշդ Մանուկի
Փրկութեան ժամը մարդկանց աւետեց.
Նըրա ժպիտն էր, որ անհուն սիրով
Սրտերի սառոյցն պիտ' հալեցընէր,
Եւ մարդկութիւնը նըրա շրթունքով
Ճշմարտութիւնը պիտի ուսանէր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Յիսուս Անունին Իմաստը

Քրիստոնէութեան Ա. դարու սկզբնաւորութեան հասարակ ու շատ գործածական անձնանուն մը եղած է Յիսուս անունը հրեաներու մէջ. անոր նշանակութիւնն է՝ Տէրը կը փրկէ: Յիսուս յունական ձեւն է եբրայական հետեւեալ երեք անուններուն որ կը հանդիպինք Հին Կտակարանին մէջ, այսինքն՝ Joshua (գիրք Ելից 17:10), Jehoshua (մարգ. Զաքարիա 3:1) եւ Jeshva (գիրք Նէեմիա 7:7): Հայերէնի մէջ Յեսու թարգմանուած են յիշեալ անունները:

Յովսէփոս պատմիչ կը յիշատակէ քսան անձեր որոնք Յիսուս անունը կրած են. անոնցմէ տասը ժամանակակից եղած Քրիստոսի: Հրէական կրօնական գրականութեան մէջ եբրայեցի հինգ քահանայապետեր Յիսուս անունով ծանօթ են:

Յիսուս անուան յիշատակութեան կը հանդիպինք նաեւ Նոր Կտակարանին մէջ: Օրինակ, կողոսացիներուն ուղղուած նամակին մէջ, Պողոս առաքեալ կը յիշէ Յիսուս մը՝ Յուստոս յորջորջուած (4:11): Կիպրոսի Պաֆոս քաղաքին մէջ ան հանդիպած է հրեայ սուտ մարգարէի մը՝ Բար-Յիսուս անունով (գործք 13:6):

Մատթէոս աւետարանիչն ալ Յիսուսի մահուան դատապարտութեան առիթով արձանագրած է Պիղատոսի հարցումը հրեայ ամբողին, թէ՛ Յիսուս-Բարրաբա՞ն կամ Քրիստոս կոչուած Յիսուսը ազատ արձակէ (27:17):

Սակայն, առաջին դարու վերջաւորութեան, Յիսուս Քրիստոսի յարութեան եւ համբարձման դէպքերէն ետք, հրեաներ ատելութեան պատճառով դադրած են իրենց մանչերը Յիսուս անուանել: Քրիստոնեաներն ալ վերջ տուած են Յիսուս անունը դնելու սովորութեան՝ զայն սուրբ նկատելով:

Յիսուս անունը հակառակ հասարակ անուն մը ըլլալուն՝ նշանակալից իմաստ ունի: Եբրայերէն լեզուով ան կը նշանակէ «Եհովան իմ օգնականն է», կամ «Եհովան ազատարար»: Նախնական դարերուն երախային տրուելիք անունը կարեւորութեամբ կ'ընտրէին, նկատողութեան առնելով նորածինին ծննդեան պարագան եւ յատկանիշները: Օրինակի համար, Սամուէլ եւ Սաուղ անունները կը նշանակեն «խնդրուածքի մատուցում», քանի որ այս ծնունդները արգիւնք եղած են անոնց ծնողներու հաւատքի աղօթքներուն եւ խնդրանքին:

Հրեայ ուրբերներ կը դաւանին որ հետեւեալ վեց անձերը ծնուելէն առաջ ստացած են իրենց անունները. Իսահակ (Ծնն. 17:19), Մովսէս (Ելք 2:10), Սողոմոն (Բ. Թագ. 12:24), Յովսիա (Գ. Թագ. 13:2), Իսայայէլ (Ծնն. 16:11) եւ Մեսիա (Յովհ. 1:41) որ կը նշանակէ Քրիստոս, այսինքն՝ օծեալ:

Յիսուս Նազովրեցիի անունը ուղղակի տրուած է Աստուծմէ: Մատթէոսի Աւետարանին մէջ կը կարդանք, որ Տիրոջ հրեշտակը քունի մէջ երեւցած է Յովսէփի ու պատուիրած.

«Յովսէփ, Դաւիթի որդի, մի վախնար ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետեւ իր մէջ յղացուածը Սուրբ Հոգիէն է: Որդի մը պիտի ծնի

եւ զայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ» (1:20-21):

Յիսուս Աստուծոյ կողմէ աշխարհ առաքուած էր մարդոց փրկութեան համար: Յիսուս մարդացաւ որպէսզի մարդկութիւնը ազատէ ազամական մեղքէն ու սատանային տիրապետութենէն՝ անոնց շնորհելով վերստին քաղաքացիները դառնալ Աստուծոյ Արքայութեան մէջ:

Կղեմէս Աղեքսանդրացի հայրապետը Յովհաննէսի Առաջին ընդհանրական նամակէն հետեւեալ մէջբերումը ընելով, թէ «Յիսուս Քրիստոս է մեր մեղքերը քաղող զոհը, որ ինքզինք մատուցանեց՝ մեր մեղքերը սրբելու համար» (2:2), յիշեալ համարը մեկնելով, եզրակացուցած է, որ «Մեր մարմինը եւ հոգին բուժողը Յիսուսն է»։ (Paidagogos 3:12):

Կիւրեղ Երուսաղէմացին նոյն նիւթի մասին անդրադառնալով ըսած է.

«Յիսուս կոչուած է յարմար անունով, որովհետեւ կենսաբեր բժշկութեան կոչումը ունի...Յիսուս անունը երբայերէնի մէջ փրկիչ կը նշանակէ, իսկ, յունարէն լեզուով՝ բուժիչ, քանի որ ան բժիշկն է հոգիներուն եւ մարմիններուն: Հոգիներու դարմանողը, կոյրերուն բժշկողը: Ան կը լուսաւորէ մարդոց միտքերը, կը բժշկէ կաղերը եւ մեղաւորներու քայլերը ապաշխարութեան կ'առաջնորդէ...Հետեւաբար եթէ ոեւէ մէկը մեղքերէ կը տառապի, ան ունի իր բժիշկը» (Catechetical Lectures 10. 4, 13):

Հետեւաբար, դիպուածի արդիւնք չէ որ Աստուծոյ Որդին Յիսուս անունով կոչուած է: Մեր Փրկչին մարդեղութեան նպատակը եղած է մարդկութիւնը ազատագրել Բելիարին որոգայթներէն ու մեղքի ճիրաններէն ու զանոնք առաջնորդել առ Աստուած, անոնց շնորհելով Աստուծոյ Արքայութեան մէջ ունեցած նախկին առանձնաշնորհումներն ու դիրքերը:

«Շնորհակալութիւն յայտնեցէք Հօր Աստուծոյ» կը պատգամէ Պօղոս Առաքեալ, «որ մեզ արժանի ըրաւ լոյսի թագաւորութեան մէջ բնակող իր ընտրեալներուն վիճակին եւ բերաւ իր սիրելի Որդիին իշխանութեան տակ: Եւ Որդին մեզ փրկեց, իր զոհագործական մահուամբը թողութիւն տալով մեր մեղքերուն» (Կող. 1:12-14):

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃՅԱՆ

Գիւմրիի »Եօթ Վերք«ը

Հինգերորդ Վերք՝ Մահը

Մահուան այդ ահաւոր գործիքին՝ խաչափայտին վրայ դամուած Յիսուսէն Աւետարաններուն մէջ եօթ հիմնական արտայայտութիւններ կ'աւանդուին: Առաջիններէն մին՝ խաչափայտին մօտ գտնուող Աստուածամօր ուղղուած Յիսուսի խօսքն է. «Ո՛վ կին, ահա քու որդիդ» (Յովհ. ԺԹ, 27): Ապա՝ անգրադառնալով իր սիրելի Յովհաննէս աշակերտին կ'ըսէ. «Ահա՛ քու մայրդ» (Յովհ. ԺԹ, 27):

Մահուան վերջին վայրկեաններուն Յիսուս իր աշակերտներէն կրտսերագոյնին՝ Յովհաննէսի կը յանձնէ իր մայրը, իսկ իր մօրը նախապէս կը յանձնարարէ զայն ընդունել իբրեւ իր սեփական որդին: Երկուքն ալ կղէովպասի, Մարիամ Մագթաղենացիի, Սողոմէի¹³ եւ թերեւս ուրիշ քանի մը հետեւորդներու հետ, մինչեւ Յիսուսի հուսկ շունչը չհեռացան քովէն:

Ճշմարիտ ու անդաւաճան սէրն է որ միայն կու գայ վատթարագոյն վտանգին թէ ծանրագոյն տառապանքին մէջ արտայայտելու իր անընդմիջելի մօտիկութիւնը: Մէրն ու ամբողջանուէր հաւատարմութիւնն են որ սուրբերուն մէջ կ'իրագործեն գերազանց նուիրումը դէպի անտեսանելին, բայց միակ հաւատալին՝ յԱստուած¹⁴:

Յիսուս, իր սիրելի աշակերտ Յովհաննէսի ընդմէջէն, Աստուածամայրը խորհրդանշականօրէն յանձնեց բոլոր հաւատացեալներուն. այսպէս, ան երկինքի մէջ ու երկրի վրայ անխտիր կը դառնայ մայրը ի Քրիստոս բոլոր հաւատացեալներուն: Արդարեւ, մայր մը ունինք երկինքի մէջ, մայր մը գորովագութ ու կաթոգին: Երկինքն այսուհետեւ անմերձենալի ու անծանօթ հեռաւորութիւն մը չէ մեզի համար, այլ ան ունի սիրտ մը՝ մայրական սիրով ու ջերմութեամբ, աստուածային ու մարդկային ամենասուրբ ապրումներով բաբախող:

Այնպէս ինչպէս Աստուածածինը իր մայրական անհուն սիրով, մահուան ու հոգեւարքի մէջ գտնուող իր որդիին զօրավիզ դարձաւ, ու զայն իր սիրատոջոր արցունքներով մխիթարեց, նոյնպէս, անցեալին ու այսօր, «Շիթ մը կուսական զօրեղ կենաց»¹⁵ իր արցունքով, պատմութեան դժար բաւիղներուն եւ խաչի ճամբաներուն վրայ, ան անսահման մխիթարութիւն պարգեւած է իր սուրբերուն եւ հիմա ալ չի՛ դադրիր շնորհելէ՝ իրեն յուսացողներուն:

Մարդ արարածի խժոժութիւնը, բնագրային ամբողջ վայրենութիւնը, իր ամենավտանգաւոր ու կործանարար դրսեւորումը գտած էր խաչեցեալ Աստուածորդիին անձին վրայ: Որքա՛ն սահմուկեցուցիչ է իմանալ, թէ ինչքան հնարամիտ է մարդը՝ իր բարբարոսութիւնը կիրարկելու ձեւերուն մէջ: Հոն ուր մարդը խելագելով իր խիղճը ատակ կը դառնայ իր նմանը կործանելու, ինքզինք է որ կը նուաստացնէ, փոշիացնելով ինքն իր մէջ այն աստուածատուր արժէքը, որ զինք էապէս գազանէն կը տարբերէ: Մարդը մարդուն գա՛յլ

մըն է միշտ, այնքան ատեն որ չի համապատասխաներ իր բուն էությունը, կը խախտէ ներդաշնակութիւնը իր բանականութեան եւ խիղճին միջեւ, կը զլանայ իր մէջ լայնօրէն տեղ տալու աստուածային ապրումին, ու զայն զգետնելով բրտութեամբ կ'աշխատի հզօրացնել իր մէջ «մարդկայինը» միայն:

Յիսուս խաչին վրայ կը մերժէ ըմպել լեղախառն քացախը, որ զինուորներէն մին եղէգով կ'երկարէ իրեն: Հին ժամանակ գործածուող այդ թմրադեղը հաւանաբար գինիի մէջ խառնած լեղի մըն էր, որ իբրեւ ցաւազրկիչ կու տային նման ծանր պատիժի ենթակայ մահապարտներու: Գիտակից յանձնառութեամբ եւ մինչեւ վերջին մրուրը իր ճակատագրին, Յիսուս կ'ըմբռնէ մարդկային մեղանչականութեան՝ Ադամէ սկսեալ բոլոր սերունդներուն գործած մեղքին հետեւանքը, ցաւն ու տառապանքը:

Ահաւասիկ այս ամէնը Քրիստոս, որպէս կենդանի օրինակ ու «Գառն Աստուծոյ», խաչափայտէն կախուած, գլխուն վրայ փշպսակին խոցած վերքերէն, դամուած ձեռքերէն, ինչպէս նաեւ կողէն ու ոտքերէն վէտ-վէտ հոսող իր մեղսաքաւիչ ու փրկարար արեամբ լուաց մեր մեղքերը, որպէսզի մենք ի վերջոյ իրեն նայինք հաւատքի աչքերով, ու կանգնած մահու եւ կենաց այս վճռորոշ պահուն հանդէպ, որոշենք ըլլալ երկչոտ հանդիսատեսներ միայն, գուցէ կրաւորական կեցուածք որդեգրած խաչահանուններ, թէ Յիսուսի հետ անցնիլ կողմը արդարութեան՝ վկայութիւն տալով Անով իրագործուած ճշմարտութեան մասին:

Իննորորդ ժամուն- հոգին աւանդելէ քիչ առաջ, Յիսուս ի խորոց սրտից կը բացագանչէ. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողուցիր զիս» (Մատ. Իէ, 46-47): Սոյնը կը հանդիսանայ 21րդ Սաղմոսի առաջին համարը: Տառապանքի այս նշանաւոր Սաղմոսը, որ դարերու գալարումին մէջ, բազմաթիւ գերեզմանութիւններու առթիւ, երբ կը գոցուէին բոլոր ճամբաները կեանքի եւ վերապրելու յոյսը կը փշրուէր ճակատագրի արիւնաներկ զոհասեղաններուն վրայ, Հին Ուխտի ժողովուրդի բերնէն յաճախ լսելի կ'ըլլար ցաւի ու բողոքի այս սրտաճմլիկ հոգևոցը. «Էլի՛, էլի՛, լա՞մա սապաքթանի» (Մատ. Իէ, 46-47):

Պէտք չէ մոռնալ, սակայն, թէ այս Սաղմոսը մարդու մօտ տառապանք իրողութիւնը հաստատող, եւ իբրեւ այդպիսին, զայն արդարացնող քերթողութիւն մը չէ, այլ խորքին մէջ աղօթք է, որ հետամուտ է մարդը դէպ' իր Արարիչը առաջնորդելու: Հետեւաբար, կրօնական զգացման մէջ տառապանքը Աստուծոյ հետ հանդիպումի վերջին նախապայմաններէն մին կը հանդիսանայ, որ ստոյգ իր իմաստաւորումը կը գտնէ խաչեցեալ Աստուածորդուոյն անձին մէջ: Այս իմաստով, Յիսուս իր տառապանքին մէջ ո՛չ իբրեւ կեանքէն դառնացող մը, ոչ ալ իբրեւ բողոքող մը, այլ աղօթող մը իբրեւ կը մահանայ. Մէկը, որ թէկուզ իր արիւնաթոր դէմքին վրայ Աստուծոյ յայտնութիւնը, աննահանջ սէրը, համապարփակ գուլթը դէպի մեղաւոր մարդկութիւնը, անխոնջ որոնումով կորուսեալը գտնելու եւ զայն տուն բերելու միակողմանի յանձնառութիւնը, ինչպէս նաեւ անպայման ու անշահախնդիր ինքնազոհութեամբ մեղանչած մարդուն ներելու¹⁶ պատրաստակամութիւնը կ'արտայայտէ: Մարդացած Որդիին մէջ

Աստուած իր սիրելիին՝ մարդու փրկութեան համար զոհաբերուող իր Անձը կենդանի օրինակ կու տայ, ու խաչին խորհուրդով մարդկութեան մէկանգամ ընդմիշտ կը պատգամէ՝ պիտի սիրես Տէր Աստուածդ էութեամբդ համակ, մտքովդ ու սրտովդ ամբողջ, եւ զայն պիտի պաշտես միայն:

Յաւիտենական խաղաղութեան մը իրականացումը կը շնորհուի խաչէն, ոչ թէ մահու մուժ ստուերին դէմ խորտակուող կեանքի մը յոռետեսութիւնը, այլ Հայր Աստուծոյ փրկարար ներկայութեան վրայ խարստուած յաղթանակող հաւատքը՝ յաւիտենական Բարիի անկործանելիութեան մասին. «Հայր, քու ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ իմ հոգիս» (Ղուկ. ԻԳ, 46), որովհետեւ «Ամէն ինչ կատարուած է» (Յովհ. ԺԹ, 30): Եւ Յիսուս գլուխը խոնարհեցնելով՝ հոգին կ'աւանդէ:

Յիսուսի առաքելութեան կատարումը իր Անձին փառաւորումն էր անտարակոյս, որուն համար Գեթսեմանիի իր քահանայապետական աղօթքին մէջ առ Հայր աղերսած էր. «Հայր, փառաւորէ քու Որդիդ» (Յովհ. Ժէ, 1): Իր Անձին փառքը իր սիրոյ գործին ակարտումն է, որ կը թուի խաչին վրայ մահուան սեւաթոյր ստուերով վերջանալ: Սիրոյ գործը սակայն վերջ չունի՝ կորուստ չկայ անոր մէջ, այլ կայ միշտ կեանք եւ աւելի՛ կեանք:

Վեցերորդ Վերք՝ Ցաւատանջը

Ձգալացունց տեսարանը ակարտած էր: Հոգեւոր ու աշխարհիկ իր ակազանի մեքենայութեամբ զսպանակուած ամբոխը Յիսուսի խաչելութեան փաստով յագեցած էր: Քահանաներ, օրէնքի ուսուցիչներ, փարիսեցիներ ու սադուկեցիներ հասած էին իրենց ժահրոտ նպատակին: Արդարեւ, «Աւելի լաւ է որ մէկ հոգի մեռնի ժողովուրդին համար» (Յովհ. ԺԸ, 1A), ինչպէս ասեանին ըսած էր Կայրափա, եւ այդ Մէկ Հոգին՝ մեռած էր խաչամած: Հետաքրքրասէր ու խնդրայարոյց մարդիկ հետզհետէ լքած էին ըստ կարելւոյն խաչին մօտ գրաւած իրենց դիրքերը: Գողգոթան սկսած էր արագ մը ամայանալ, որուն առաւել եւս օգնած էին Աստուածորդւոյն մահուան միջոցին տեղի ունեցած երկրաշարժն ու անօրինակ խաւարումը¹⁷:

Մուժ երկինքին տակ, զինուորներուն հետ հոյլ մը մարդիկ միայն կը յամառէին մնալ խաչին մօտ: Անոնց մէջ կ'իյն մը յատկապէս աչքի կը զարնէր, որ խաչի արիւնաներկ ոտքին փաթթուած, ցաւագին աղաղակներով ու արցունքի փղձկումներով իր որդւոյն մահը կ'ողբար. Աստուածամայրն էր:

Հակառակ անոր որ հոովմայեցիներու սովորութեան համաձայն մահապարտները կրնային օրերով կախուած մնալ խաչերուն վրայ, յաճախ մինչեւ փտութիւն կամ կեր՝ գիշատիչ թռչուններու, ըստ Մովսիսական հրեայ յանցադործներու նկատմամբ կիրարկուող հնամենի մէկ օրէնքի¹⁸, խաչեալները նոյն երեկոյեան պէտք է խաչէն վար առնուէին ու թաղուէին յանցադործներու համար նկատի առնուած գերեզմանատան մէջ: Բայց եթէ երբեք այնպէս պատահէր թէ մահապարտը մինչեւ երեկոյ կենդանի մնար խաչին վրայ,

հրեաներ կոտորել կու տային անոր սրունքները, որպէսզի մահը շուտ պատահէր, եւ պղծուելէ զգուշանալով զայն թաղել կարենան նոյն երեկոյեան:

Այս առթիւ, նկատի ունենալով որ յաջորդ օրն ալ տօնական Շաբաթն էր, հրեաներ Պրիշտոսէ խնդրեցին, որ երեկոյեան դէմ երեք խաչեալներն ալ խաչերէն վար առնուին: Կուսակալը, որ քաջածանօթ էր հրէական սովորութիւններուն, այս ուղղութեամբ որեւէ դժուարութիւն չյարուցանեց, ու յատկապէս քանի դեռ խիղճն ալ ամբողջ եղելութենէն ծանրաբեռնուած էր, իր մակագրութեամբ «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից» յորջորջուածը, ինչպէս անոր աջ ու ձախ կողմերը խաչուած աւազակները թաղելու արտօնութիւնը անմիջապէս տալով, հարցը փակուած եւ պատահածներն ալ արդէն մոռցուած նկատեց:

Հոս է որ եղբրական այս ամբողջ բեմահարթակին վրայ, ուր մատնիչներ, երկչոտներ, մոլեռանդներ, աւանդապաշտներ, կրօնամոլներ, տիրապետող հեղինակութեանց ներկայացուցիչներ ու հետաքրքրասէր հանդիսատեսներ խճողած էին, յանկարծ կը յայտնուի նոր անուն մը՝ Յովսէփ Արիմաթացի, հրէական Ատեանի անդամ, որ ծածուկ հետեւած է Յիսուսի, համակրած է անոր, իսկ այժմ պատրաստ է դուրս գալու իր կրաւորական դիրքէն՝ Կուսակալէն անձամբ եւ ուղղակի խնդրելով Յիսուսի մարմինը:

Այս կարեւոր վկայութիւնը մատնացոյց կ'ընէ այն մասին, որ Բարի Սերմնացանը դաշտ ելած ու իր բարի սերմերը ցանած էր Աստուծոյ Արքայութեան համար. անոնցմէ ոմանք ինկած էին ճամբաներու եզրին, ուրիշներ՝ ժայռերու վրայ կամ փշոտ մացառներուն մէջ. ոմանք կեր դարձած էին երկինքի թռչուններուն, ուրիշներ իսկոյն խանձուած էին արեւուն յուռթի ճառագայթներէն կամ խեղդուած էին թուփին խտացող փուշերէն: Բայց այն սերմերը, որոնք Բարի Սերմնացանին կանխատեսութեամբ ինկած էին Յովսէփ Արիմաթացիի, Նիկողեմոսի, նաեւ Հոյլ մը ուրիշ մարդոց սրտի բարեբեր հողին մէջ, սկսած էին Յիսուսի խաչին վրայ թափած արեան ոռոգումով ընծիւղել եւ տալ իրենց պտուղը:

Յովսէփ Արիմաթացիի նախաձեռնութեամբ, ուրեմն, Յիսուսի անշնչացած մարմինը վար կ'առնուի խաչէն¹⁹ ու, վերջին բաժանումէ առաջ, պահ մը կը դրուի Աստուածամօր գիրկը: Տիեզերքի մը պէս անհուն այդ մայրական գիրկը, որ երբեմն գգուած ու դիեցուցած էր Մանուկ Յիսուսը Բեթղեհէմի սուրբ այրին մէջ, այժմ, խաչին ոտքը, ակամայ դարձած է բուռ մը դազաղը անոր: Չկայ տեսարան մը աւելի հակասական քան այն՝ որ իրարու մօտ կը բերէ մարդկային կեանքի սկիզբն ու վախճանը: Սուրբ մսուրը, որուն մէջ նիրհող մանկիկին վերեւ յար կը հսկէր մօր մը ծիծաղախիտ աչքը, ու զաւկի մը դիակը՝ որուն վրայ հակած է ցաւատանջ Աստուածամօր տառապահիւծ սիրտը:

Չար եւ բժոտ աչքեր չեն կրնար նայիլ աստուած-մարդկային այս սրբութեան բարձրակէտին: Մահկանացու աչք մը պէտք չէ որ տեսնէ Աստուածամօր տառապանքին խորքը, որ աւելի սոսկալի է քան մահը, եւ որ ան կրեց ի ծառայութիւն եւ հաւատարմութիւն գերագոյն Սիրոյ պաշտամունքին:

Նոյնացած չէ՞ արդեօք հայ մայրը ցաւատանջ Աստուածամօր այս կերպարին հետ, հայոց պատմութեան այնքան մուսյլ ու փշոտ ճամբաներուն վրայ: Միթէ չէ՞ դարձած ան անվերջ ճենճերող կենդանի վկան՝ անագորոյն ճակատագրի գորշ բագիններուն վրայ: Ասպատակող անթիւ ազգեր եւ վայրագ ցեղեր չե՞ն մխրճած արդեօք իրենց բիւր նիզակներն ու տէգերը անոր արիւնքամ սրտին մէջ՝ դաժան դարերու արիւնաներկ քառուղիներուն վրայ: Եւ տառապանքի ահարկու այս լեռնաշղթային ամենամուսյլ գագաթը չի՞ կազմեր արդեօք 1915 թուականի Յեղասպանութիւնը, երբ թուրք եւ քիւրտ մարդակերպ ճիւղներ դիակեր անգղերու պէս իրենց արիւնախանձ կտուցները սրեցին անոնց կմախքացած մարմիններուն ու ցամքած ստինքներուն վրայ: Աստուածամօր օրինակով միթէ անոնք չդարձա՞ն ցաւատանջ նոր մայրեր, ուղեկցելով իրենց անխնայ ջարդուող, սովէ ու հիւանդութենէ մեռնող որդիներուն ու դուստրերուն Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ ամբողջ տարածքով, մինչեւ տխուր ափերը Եփրատի, եւ մինչեւ մահասփիւռ աւազուտները Տէր Զօրի: Սեփական ձեռքերով փորեց հայ մայրը իր իսկ ծոցածին ցեղին եւ սիրասուններուն անթիւ գերեզմանները, գերծ պահելու համար գէթ անոնց անշնչացած մարմինները գիշատիչ թռչուններու եւ վայրի գազաններու աւերէն: Ո՞վ չփորձեց լլկել կամ պղծել զինք անգամ իր օրհասականին մէջ. բայց ան մնաց մի՛շտ սուրբ, մնաց մի՛շտ կոյս իր հոգիին լոյս խորանով, վերապրելու անխորտակելի յոյսով, իր մտքին է՛ն բարձր տիպարին՝ Աստուածամօր կենդանի եւ գերազանց խորհուրդով:

Եօթներորդ Վերք՝ Թաղումը

Գերեզմանը՝ հանգուցեալի մը երկարաձգուած ներկայութիւնն է երկրի վրայ, երկրի ծոցը աճիւնացած նշխար մը միայն: Ամէն բան կրնայ կորսուիլ եւ կ'անհետի՝ իսկ նիւթական կեանքին մէջ. գեղեցկութիւն, վայելք, հարստութիւն, ոյժ, պաշտօն, փառք ու պատիւ եւ ուրիշ առաւելութիւններ: Գերեզմանը նիւթեղէն խորհրդանիշն մըն է մարդոց կողմէ մեռածին տրուած տեսակ մը արժանապատուութեան, վերջին յարգանք՝ մեռնողին ու անոր մարմնոյն նկատմամբ, դիակ՝ որ երբեմն մարդ մըն էր ամբողջ, ապրող ու շնչող ներկայութիւն մը:

Արգաբեւ, Յովսէփ Արիմաթացիին նախաձեռնութիւնը՝ հրեաներու կողմէ Յիսուսի զգեստնուած արժանապատուութեան վերականգնումն էր: Իրեն գործակից ունենալով Նիկողեմոս²⁰, որ նոյնպէս կը թուէր անդամ ըլլալ հրեական Ատեանին²¹, կը վերցնեն Յիսուսի մարմինը եւ ըստ հրէական սովորութեան, անուշաբոյր խունկերով ու մաքուր կտաւով պատանքելէ ետք, զայն կը թաղեն Գողգոթայի մօտ՝ պարտէզի մը մէջ, որ կալուածն էր Յովսէփ Արիմաթացիի, եւ ուր վիմափոր նոր գերեզման մը փորել տուած էր:

Աստուածամայրը հոն կը գտնուէր մինչեւ Յիսուսի երկրաւոր կեանքի վերջին հանգրուանը, մինչեւ անոր թաղումը: Այս մտթ ու դժբախտ օրերու

խարխափում են երուն մէջ ապրումներու ինչպիսի՛ փոթորիկներ ալեկոծած էին անոր վշտակոծ հոգին, իսկ չարաբաստիկ դէպքերու որքա՛ն սուր փուշեր արիւննած էին անոր քնքուշ սիրտը: Սկսելով ձերբակալութեան պահէն, մահադիմակ դատաւարութենէն, բիրտ ուժերու հետզհետէ սաստկացող մոլուցքէն, խաչի մահագնաց ճամբաներէն, Գողգոթայի խաչելութենէն մինչեւ մահն ու թաղումը իր որդիին, անզուգական ինչպիսի՛ հաւատարմութիւն եւ սէր մըն է զօրեղ մայրական սրտի, որ կը ներչնչէ ու անգնահատելի առաքինութիւններով կ'օժտէ կինը փերուն՝ յարատեւելու իր գաւկիին մօտ ընդհուպ երկունքը գերեզմանին:

Դեռ երէկ կոյս մը դեռատի, երբ իր սենեակին մէկ անկիւնը ընդունեց աւետաբեր հրեշտակին ողջոյնը, իբրեւ «Ադախին Տեառն» ամբողջապէս հնազանդեցաւ Աստուծոյ մեծափառ կամքին, իր հողանիւթ շինուածքին մէջ առնելու աստուածային հուրը՝ ունենալու համար մաս եւ բաժին Փրկագործութեան նախատեսուած խորհուրդին: Հոն կիներուն մէջ երանելի էր տակաւին, բայց հիմա այստեղ իբրեւ ցաւատանջ մայր՝ իր անգոսնուած, հալածուած ու չարչրկուած, խաչուած ու մահացած որդւոյն գերեզմանին դիմաց կանգնած, իր հոգւոյն մէջ անվրէպ նոյնը կը խորհէր՝ «Թող քու կա՛մքդ ըլլայ»: Լաւագոյն ողջմտութիւնը եւ ճշմարիտ հաւատքի բարձրագոյն փիլիսոփայութիւնը կը խտանայ այս բառին մէջ, որ իրարու կը միացնէ մայրն ու որդին համակ նուիրումի ինքնագերազանցումով:

Աստուած փնտռեց մայր մը՝ սիրտը դարձնելու համար իր հաւատքին խորանը: Հոն է որ շարունակ կանգուն կը մնայ նուիրումի սեղանը, ուր սէրը կը պատարագուի. պէտք է լսուի՝ հոն միշտ կեանքի սրբութիւնը՝ թէ՛ մեր էութեան խորը կը բնակի Աստուծոյ կենդանութեան խորհուրդը:

Յիսուս ճշմարտապէս մահացաւ ու թաղուեցաւ դրուելով վիմափոր գերեզմանին մէջ: Բայց սէրը աւելի՛ զօրեղ է քան մահը: Կեանքին խորհուրդը անկործանելի ու անմեռ է հաւատացեալ մարդուն համար: Մահը, հետեւաբար, ընդհատումը չէ կեանքին, այլ անցում մըն է երկրաւորէն երկնաւոր, նիւթեղէնէն դէպի հոգեւոր, ժամանակաւորէն դէպի անժամանակ, անցաւորէն՝ անանց, վաղանցուկէն դէպի յաւիտենական գոյութիւն: Մահը անգոյութեան չափանիշ չէ այլեւս, ոչ այլ սարսափազդու խորհրդանիշն է անոր, այլ Յիսուսով դէպի Յաւիտենականութիւնը բացուած լուսանցք մըն է ան, ուրկէ հաւատքին մարդը կը տեսնէ նոր արշալոյսը կեանքին, ու սրտի խորքէն կը լսէ ձայնը՝ նման այն աւետաբեր հրեշտակին, թէ՛ «Մեռած չէ ան, այլ կ'ապրի նոր ու աւելի՛ կեանքով»:

* * *

Այսպէս, սեւեռելով մեր հայեացքը Գիւմրիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Եօթ վէրք» սրբապատկերին վրայ, հանգրուան առ հանգրուան առաջնորդուեցանք Յաւատանջ Աստուածամօր սրտի եօթը խորհուրդներուն ընդմէջէն, ընդամէնը գրաւական ունենալով մանանխի հատիկի մը չափ մեր հա-

լատքը: Վէրքերու Տիրամայրը, որուն սիրտէն իբրեւ սուր անցած են Միմէօն ծերունիի կսկծալի մարգարէացումը, դէպի Եգիպտոս աքսորը, Երուսաղէմի մէջ պատանի Յիսուսին կորսուելը, սոսկալի խաչելութիւնը, մահը, անոր շիջած կեանքը իր մայրական գիրկը ընդունելը ու գերեզմանին տուած վերջին հրածնալը, ոչ միայն գիւմրեցի մեր բազմաչարքար քոյրերուն եւ եղբայրներուն, այլ ընդհանրապէս հաւատաւոր հայ մարդուն համար, անցեալին ու այսօր, ան դարձած է եւ է միշտ Սիրահայեացը, Քաղցրահայեացը, Բարձրահայեացը, Շնորհընկալը, Խնդրակատարը, Չարխափանը, Հոգեաց Մայրը, Վիրաց Տիրամայրն ու Յաւատանջ Աստուածամայրը, որ կը լսէ իր որդիներուն եւ դուստրերուն անկեղծ սրտէ բխած պաղատանքն ու աղօթքը եւ կը կատարէ անոնց ուխտը:

Այս հաւատքով եւ նուիրումով տոգորուած դէպի յաւէտ Բարեխօսն ու Ամէնօրհնեալ Սրբուհին, խոկումներու իբրեւ հուսկ բանք, պիտի չզլանամ մեր Եկեղեցւոյ Առաւօտեան ժամակարգութենէն՝ փոխառութեան կարգով դիմելու միջնադարու հայ սրբակեաց վանականի՝ Ծննդեան, Աւետեաց, Տեառնընդառաջի եւ Աստուածածնի Փոխման ձօնած քարոզի խօսքերուն, աղերսելով անոր հետ սիրահայեաց բոլոր քրիստոնեաներուս Մօր բարեխօսութիւնը՝ իրմէ ծնած ու սնած Յիսուս մանուկին մօտ՝ չար փորձանքներէ, անբուժելի հիւանդութիւններէ, կործանարար պատերազմներէ, փորձութենէ, մոլութենէ ու ձախորդութենէ զմեզ պահպանելու համար:

Յիրաւի՛, այսօրուան ահարկու եւ պատերազմներով խռովեալ աշխարհին մէջ, երբ Արեւմուտքէն Մերձաւոր՝ մինչեւ Հեռաւոր Արեւելք, պետութիւններու կողմէ որդեգրուած միակողմանի շահերու մոլեգիտ քաղաքականութիւնը՝ արդարութիւն անուանուած առաքինութիւնը խուժանաբար կ'անգոսնէ, երբ միլիտնաւոր մարդոց հետ մենք ալ ենթարկուած խոր անձկութեան ու զօրաւոր կարօտով մը բաբախուն, որքա՛ն պէտք ունինք երկնառաք խաղաղութեան մը իսկական կատարումին. նաեւ այս առթիւ, մեր սրտին խորունկ տուայտանքը վերստին միախառնելով սրբակրօն վանականի վերոյիշեալ քարոզի յուզականութեան, մեր անվերջ թախանձանքը կը ներկայացնենք Գիւմրիի Եօթ Վէրքերու Յաւատանջ Աստուածամօր, հայցելով միշտ իր կաթողին եւ զթառատ բարեխօսութիւնը իր մարմին լոյս խորանին մէջ կատարելապէս մարդացած Աստուածմանուկին ու մեր Փրկչին մօտ.

«Սփանչելի լոյսի սուրբ մայր, որ յաւիտեակական Աստուած քու որովայնիդ մէջ կրեցիր, եւ Բանն Աստուած աշխարհի ցնծութեան համար ծնար. կ'աղաչեմք»:

«Մա՛յր սուրբ բարեխօսէ՛»:

«Քեզմէ մարմին առած Աստուծոյ մեզի համար աղաչէ, որ հայրական ծոցէն խոնարհելով, մարմին առաւ մարդկային մեր բնութեան համաձայն՝ խաղաղութիւն բերելու երկիմբի մէջ ու երկրի վրայ. կ'աղաչեմք»:

«Մա՛յր սուրբ բարեխօսէ՛»:

«Քեզմէ մարմին առած Աստուծոյ մեզի համար աղաչէ, ներել եւ անտեսել մեր յանցանքները, եւ օգնել մեզի կարենալ դիմադրելու հակառակորդներու դէմ մղուած պատերազմին մէջ. կ'աղաչեմք»:

«Մա՛յր սուրբ բարեխօսէ՛»:

«Քեզմէ մարմին առած Աստուծոյ մեզի համար աղաչէ, որպէսզի աւարտին պատերազմները, դադրին թշնամիներուն յարձակումները, երկրի վրայ սէր եւ արդարութիւն հաստատուին. կ'աղաչեմք»:

«Մա՛յր սուրբ բարեխօսէ՛»:

«Քեզմէ մարմին առած Աստուծոյ մեզի համար աղաչէ, մեր երկրին մէջ բազմացնելու անոյշ աղբիւրներուն բխումը, բոյսերու եւ տունկերու առատ պտղաբերումը՝ անհրաժեշտ մեր բոլոր կարիքները գոհացնելու համար. կ'աղաչեմք»:

«Մա՛յր սուրբ բարեխօսէ՛»:

«Քեզմէ մարմին առած Աստուծոյ մեզի համար աղաչէ, որպէսզի միանայ իր սուրբ եկեղեցին՝ հաստատուած առաքեալներու եւ մարգարէներու հիմքին վրայ, անարատ պահելով զայն մինչեւ իր գալստեան յայտնուելու օրը. կ'աղաչեմք»:

«Մա՛յր սուրբ բարեխօսէ՛»:

«Մեզի համար աղաչէ՛, ո՛վ Սրբուհի, քու միածին որդիիդ, նաեւ հանգուցեալ հոգիներուն համար՝ ընդունելու երկնից արքայութիւնը, անոնց մաս եւ բաժին տալով սուրբերու դասին հետ. կ'աղաչեմք»:

«Մա՛յր սուրբ բարեխօսէ՛²²»:

Բարեխօսէ եւ մի՛ անտեսեր նաեւ զիս Մա՛յր, այլ սրբանկարիդ ընդմէջէն տամկացած, բայց յաւէտ սիրահայեաց, քաղցրահայեաց, բարձրահայեաց ու ողորմած աչքերովդ նայէ, եւ քու սիրասուն Որդիիդ մօտ յիշատակէ՛ Տ. Աբէլ Մանուկեան Քահանան՝ ամենայետինը եւ նուաստազոյնը Փրկչական Մարմնի եւ Արեան Խորհուրդով հիմնուած Եկեղեցւոյ Ուխտի սպասաւորներէն:

Շար. 3 եւ վերջ

Ա.ԲԷԼ. ՔԷՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծանոթագրություններ.

13. - Տե՛ս, Յովհ. ԺԹ, 25:
14. - «Դուն զիս տեսար եւ հաւատացիր. երանի՛ անոնց որոնք առանց տեսնելու կը հաւատան» (Յովհ. Ի, 29):
15. - Նարեկացի
16. - «Հա՛յր, ներե՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն» (Ղուկ. ԻԳ, 34):
17. - Տե՛ս, Մատ. ԻԷ, 51: Ղուկ. ԻԳ, 44:
18. - Բ. Օր. ԻԱ, 22-23:
19. - Եկեղեցւոյ աւանդութիւնը կը հաղորդէ, թէ Յովսէփ Արիմաթացի երբ կը փորձէ խաչափայտէն վար առնել Յիսուսի անշնչացած մարմինը, ուզելով նախ գամերը հեռացնել անոր ձեռքերէն ու ոտքերէն. յանկարծ կայծակներ ու կրակ կը սկսի ժայթփիլ Յիսուսի մարմնին վրայ գամերուն ու տէգին բացած վերքերէն: Բարեպաշտ Արիմաթացին տեսնելով որ հրակէզ պիտի ըլլայ, խաչին առջեւ ծունկի գալով ձեռնամած կը սկսի երեքսրբեանը աղօթել. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»: Այս աղօթքը երեք անգամ կրկնելէն ետք, ահա ինքն իրեն կը սկսի իջնել տէրունական մարմինը երանելոյն ուսին վրայ:
20. - Տե՛ս, Յովհ. Գ, 1-21:
21. - Յովհաննէս աւետարանիչ Նիկողեմոսի «Հրեաներու Իշխանաւոր» եւ «Իսրայէլի վարդապետ» տիտղոսները կու տայ: Հմմտ. Յովհ. Գ, 1, 10:
22. - Թարգմանութիւնը մերն է: Տե՛ս գրաբար բնագիրը՝ Ժամագիրքին մէջ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՄԱՏԵԱՆԸ

Ա. - ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍԵԼԱԿԵՐՊԸ

Աստուած խօսած է անցեալին, եւ կը խօսի այսօր: Բայց ի՞նչպէս, ի՞նչ ձեւով լսելի կը դարձնէ ինքզինք, իր խօսքը: Աշխարհը ստեղծագործութիւնն է Աստուծոյ. մարդը սիրոյ պտուղն է աստուածային նախախնամութեան: Ծննդոց գիրքը իր առաջին իսկ գլուխին մէջ պատմելով մարդուն ստեղծումը երկրի փոշիէն, կը շեշտէ թէ Աստուած իր պատկերով եւ իր նմանութեամբ ստեղծեց զայն (Ա. 26-27), անոր ունեւորուն կենդանութեան շունչ փչեց, եւ մարդը ապրող էակ դարձաւ (Բ. 7): Եւ ապա, ստեղծման այդ առաջին պահէն իսկ Աստուած խօսեցաւ մարդուն, իր պատուէրը տուաւ անոր. եւ այնուհետեւ խօսեցաւ միշտ անոր, նոյնիսկ երբ ան մեղանչեց եւ իր փառքէն ինկաւ, այսինքն՝ Աստուծոյ անմիջական ներկայութեան մէջ ապրելու շնորհքէն զրկուեցաւ: Այսպէս, Աստուած խօսեցաւ Կայէնի (Դ. 6-15), Նոյի (Ձ. 13-Ը), Աբրահամի (ԺԲ. 1-3) եւ անոր սերունդէն՝ նահապետներու, դատաւորներու եւ թագաւորներու, տեսանողներու եւ մարգարէներու:

Բայց արդէն իսկ սահմանագատում մը ըրած եղանք, որովհետեւ որոշ անուններ կամ անհատներ յիշելով՝ մատնանշած եղանք թէ Աստուած իր յայտնութիւնը կ'ընէ որոշ մարդոց միջոցաւ, որոնք իր Հոգին կը կրեն իրենց ներսիդին եւ զայն կենդանի կը պահեն իրենց մէջ, անոր ներշնչումով խօսելու եւ յայտնելու համար Աստուծոյ կամքն ու ծրագիրը: Պետրոս Առաքեալ յստակ սահմանում մը կու տայ՝ ըսելով. «Սուրբ Հոգիին մղումով է որ Աստուծոյ մարդիկը խօսած են» - Բ. Պտ. Ա. 21: Մարգարէները Տէրոջ բերանն էին պարզապէս. պատմողներն էին այն խօսքերուն կամ խորհուրդներուն՝ զորս Տէրը տեսիլքով կը յայտնէր անոնց: Մարգարէական այս հոգիին կապակցութեամբ՝ Գրիգոր Տաթեւացի հետեւեալ չորս կէտերով կը ներկայացնէ Աստուծոյ յայտնութեան կերպերը. «Մարգարէութիւնը հոգեւոր եւ աստուածային գիտութիւն է, զոր անոնք Սուրբ Հոգիէն ուսանելով կը խօսին՝ մարդիկը զգուշացնելու եւ հոգեւորապէս դաստիարակելու համար: Եւ ասիկա կ'ըլլայ չորս կերպերով. - նախ՝ երազներով, ինչպէս Սողոմոնին եղաւ: Երկրորդ՝ տեսիլքով, ինչպէս Եսայիին եղաւ: Երրորդ՝ երեւակայութեամբ, ինչպէս եղաւ Նիսիւսին՝ որ հրեշտակներու զօրքը տեսաւ, մինչ պատանին չտեսաւ: Չորրորդ՝ յայտնութեամբ միտքը լուսաւորելով, առանց երեւակայութեան, Սուրբ Հոգիին շնորհքով միտքը լուսաւորելով, ինչպէս Աստուած Մովսէսի կ'ըսէր. «Տեսիլքով կամ երագով չէ որ պիտի երեւիմ ու խօսիմ քեզի, այլ՝ բերնէ բերան, դէմ դիմաց երեւելով» - Գիրք Հարցմանց, հատոր 9, պրակ 4:

Յայտնութեամբ տրուած այս օրէնքն ու պատգամը, տեսիլն ու ակտիսը ժամանակ առ ժամանակ արձանագրուեցան, ինչպէս տեսանք, երբեմն Աստուծոյ իսկ անմիջական թելադրութեամբ կամ հրահանգով: Եւ խօսքը եղաւ գիր:

Այն Հոգին կամ Շունչը, որ լեցուցած էր մարգարէն՝ լեցուց նաեւ զիրը, զիրքը, եւ իրմով շնչաւորեց զայն: Բովանդակութիւնը Տէրոջն էր, գրիչը՝ մարգարէ ծառաներունը: Միտքը Արարչինն էր, արձանագրութիւնը՝ Բանին հաղորդ արարածներունը: Հոգին Աստուծոյնն էր, գիրը՝ հոգելից մարդոցը: Մարգարէներու խօսքերուն ու գրութիւններուն մէջ Աստուծոյ շունչը, այսինքն Աստուծոյ ներշնչումը կայ, եւ ատոր համար է որ մենք ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁ ՄԱՏԵԱՆ կը կոչենք այն՝ ինչ որ ուրիշ ժողովուրդներ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ կ'անուանեն: Արգարեւ աստուածաշունչ բառը, որ անակաճ մըն է, միայն մէկ անգամ կը գտնենք ամբողջ Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ: Պօղոս Առաքեալ իր աշակերտին՝ Տիմոթէոսի յղուած երկրորդ Նամակին մէջ կը գրէ. «Ամենայն Գիրք աստուածաշունչք», որուն աշխարհաբար բառացի թարգմանութիւնը կ'ըլլայ. «Բոլոր աստուածաշունչ Գրքերը»: Իսկ աւելի ազատ թարգմանութիւնը. «Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Գրքերը» - Բ. Տիմ. Գ. 16:

Պօղոս Առաքեալ այս բացատրութեամբ անշուշտ կ'ակնարկէր այն գրքերու ամբողջութեան՝ զոր մենք այսօր կը ճանչնանք որպէս Հին Կտակարան. որովհետեւ տակաւին չկար եւ ամբողջութեամբ չէր արձանագրուած Նոր Կտակարանը: Իսկ, եթէ Հին Կտակարանը Աստուծոյ ներշնչումով գրուած գրքերուն գումարն է, ի՞նչ կը ներկայացնէ Նոր Կտակարանը:

Բ. - ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ԱՄԲՈՂՁԱՑՈՒՄԸ

Աստուած չդադրեցաւ, եւ բնաւ չի դադրիր մարդուն խօսելէ: Այդպէս ալ Հին Կտակարանով չփակուեցաւ ու վերջ չգտաւ Աստուծոյ Խօսքը, այլ շարունակուեցաւ: Եբրայեցիներուն գրուած Պօղոսի նամակը կը սկսի հետեւեալ հաստատումով. «Անցեալին բազմաթիւ անգամներ՝ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ» - Եբր. Ա. 1-2: Աստուծոյ Խօսքը ո՛չ միայն շարունակուեցաւ, այլ մանաւանդ նոր տարողութիւն ստացաւ եւ հասաւ իր ամբողջացման: Քրիստոսով Աստուծոյ յայտնութիւնը հասաւ իր նշանակէտին ու կատարելութեան:

Նախ որ Քրիստոս ի՛նք Աստուծոյ Խօսքն էր (գրաբար լեզուով՝ Բան, յունարէն «Լոկոս»): Այդ «Խօսքը սկիզբէն Աստուծոյ քով էր, եւ Խօսքը ինք Աստուած էր» - Յովհ. Ա. 1: Աստուծոյ ստեղծագործ Խօսքն էր ան, որով ամէն ինչ ստեղծուեցաւ: Եւ պատմութեան մէջ օր մը, երկու հազարամեակներ առաջ, այդ «Խօսքը մարմին եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ» - Յովհ. Ա. 14: Քրիստոսով Աստուծոյ Խօսքին ստացած նոր տարողութիւնը այն է, որ այդ Խօսքը եկաւ ինքզինք յայտնելու եւ մարդոց մէջ բնակելու իր լիութեամբ:

Աստուծոյ յայտնութիւնը աստիճանական զարգացման որոշ ընթացքով մը տրուեցաւ, մարդիկը պատրաստելու համար յայտնութեան իրերայաջորդ մակարդակներուն, որոնց վերջինը եւ բարձրագոյնը պիտի ըլլար Քրիստոսով: Արդ, «բոլոր մարգարէները եւ Օրէնքը մինչեւ Յովհաննէս (Միտրիչ) մարգա-

րէացան» - Եբր. ԺԱ. 13: Այդ մարգարէական յայտնութեանց ընդմէջէն՝ «Օրէնքը մեր դաստիարակը եղաւ՝ մեզ Քրիստոսի առաջնորդելով», «որովհետեւ Օրէնքին վախճանը Քրիստոսն է» - Գաղ. Գ. 2Ա, Հռոմ. Ժ. 4: Բայց ի՞նչ կը նշանակէ վախճան. «Օրէնքին վերջը» ըսելով՝ Օրէնքին ջնջումը կը հասկնայ արդեօք Առաքեալը: Ո՛չ, անշուշտ. որովհետեւ Քրիստոս ինք յատկօրէն պիտի յայտարարէր. «Մի՛ կարծէք թէ օրէնքը կամ մարգարէութիւնները ջնջելու եկայ: Չեկայ ջնջելու, այլ՝ կատարելու» - Մատթ. Ե. 17: Պօղոս ըսել կ'ուզէ թէ Քրիստոսով օրէնքը հասաւ Աստուծոյ կողմէ առաջադրուած նշանակէտին, իր եզրակացութեան, յայտնութեան բարձունքին: Օրէնքը միայն օրինակը եւ շուքն էր Աստուծոյ Խօսքին ճշմարտութեան, մինչդեռ Քրիստոս նոյնինքն Աստուծոյ Խօսքն էր. հետեւաբար՝ ճշմարտութիւնը, իրականութիւնը: Օրէնքը աստուածային շնորհքին մասնիկը միայն կը պարզեւէ անոնց՝ որոնք կը յաջողէին կատարել Օրէնքը. մինչդեռ Քրիստոս ամբողջութիւնն էր, լիութիւնն էր այդ շնորհքին: Ահա՛ թէ ինչո՛ւ Յովհաննէս Աւետարանիչը պիտի ըսէր. «Անոր լեցունութենէն մենք բոլորս շնորհք շնորհքի վրայ առինք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ, մինչ շնորհքը եւ ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ եկան» - Յովհ. Ա. 16:

Այս ճշմարտութիւնը լոյս կը նետէ նաեւ Հին Ուխտին հասկացողութեան վրայ: Օրէնքն ու Մարգարէները, Հին Կտակարանի պատմութիւնն ու իմաստութեան գրականութիւնը իրենց ամբողջական իմաստը կը գտնեն միայն Քրիստոսով, անոր յայտնութեան մէջ: Հետեւաբար գանոնք ճիշդ հասկնալու եւ ուղիղ մեկնաբանելու առաջին պայմանը՝ գանոնք Քրիստոսի գալուստին եւ անով սկիզբ առած փրկագործութեան լոյսին տակ դիտելն է: Ընդ ինչպէս երախայի մը ծնունդն է որ կ'իմաստաւորէ անոր սաղմնաւորումէն մինչեւ ծնունդը երկարող յղութեան շրջանի կեանքը, (որ իրական կեանքին յարաբերաբար անորոշ ստուերն է միայն եւ ինքնանպատակ չէ, այլ կը ծառայէ մանկիլը կազմաւորուած ձեւով հասցնել իր ծննդեան), այնպէս ալ մինչեւ Քրիստոսի գալուստը երկարող դարաշրջանները մարդկութեան իրական հոգեւոր ծնունդն ու փրկութիւնը կանխող «յղութեան» շրջանն էին, եւ իրենց իմաստն ու նպատակը գտան այդ հոգեւոր ծնունդին սկիզբը նշող Քրիստոսի գալուստով ու յայտնութեամբ:

Ասիկա ինքնին կը նշանակէ թէ Քրիստոսն է կեդրոնը եւ առանցքը Աստուածաշունչ Մատեանին, այսինքն Աստուծոյ Խօսքին յայտնութեան: Ի՞նչն է կեդրոնը եւ առանցքը Հին եւ Նոր Կտակարաններուն, որոնք իր շուրջ կը դառնան՝ ինչպէս ձգողութեան բեւեռի մը: Ահա՛ թէ ինչո՛ւ որեւէ ձեւով կարելի չէ իրարմէ անջատել Աստուածաշունչի երկու բաժինները, որոնք իբրեւ իրարու շարունակութիւն՝ միասին մէկ ամբողջութիւն կը կազմեն: Ինչպէս կարելի չէ Հին Կտակարանը իմաստաւորել եւ իր վախճանական նպատակին մէջ հասկնալ՝ առանց Նորին, այնպէս ալ հնարաւոր չէ Նոր Կտակարանը իբրեւ Հինին կատարումն ու ամբողջացումը հասկնալ եւ լրիւ գնահատել՝ առանց Հին Կտակարանին: Առաջինը եթէ յառաջահայեաց կանխասացութիւն

մըն էր՝ իր կատարման ապացոյցին սպասող, երկրորդը իր կատարման ապացոյցովն իսկ յետահայեաց քննութեամբ կը հաստատէ Հինը, եւ կը հաստատուի անկէ քաղուած վկայութիւններով:

Գ. - ՆՈՐ ՈՒՒՏԸ

Ըսինք թէ Աստուծոյ Խօսքը չփակուեցաւ ու վերջ չգտաւ Հին Կտակարանով, այլ շարունակուեցաւ Քրիստոսով: Անով սկիզբը դրուեցաւ Նոր Կտակարանին: Կտակարան կը կոչենք որեւէ գրութիւն կամ գիրք՝ որ կտակ մը կամ ուխտ մը, այսինքն համաձայնագիր մը կը պարունակէ: Հին Կտակարանը Աստուծոյ կողմէ մարդուն հետ կնքուած առաջին Ուխտը կը պարունակէր, տեսակ մը խոստմնագիր էր՝ Աստուծոյ կողմէ մարդուն տրուած: Նախ՝ Նոյի, թէ աշխարհ եւ մարդկութիւն անգամ մը եւս պիտի չբնաջնջուին (Ծննդ. Թ. 11-17): Ապա՝ Աբրահամի, թէ իր զաւկին ընդմէջէն ազգերու հայր պիտի ըլլայ, եւ իր սերունդները պիտի ժառանգեն խոստացուած երկիրը (Ծննդ. ԺԷ, 2-8, եւլն.): Յետոյ Մովսէսի միջնորդութեամբ՝ իր ազատագրուած ժողովուրդին, թէ զայն կ'ընտրէ իր ժողովուրդը ըլլալու համար (Ելից ԻԹ. 2-13, եւլն.): Ի վերջոյ՝ Դաւիթի, թէ անոր սերունդէն յաւիտենական թագաւորութիւն մը պիտի տայ (Բ. Թագ. Է. 4-16, եւլն.): Այդ խոստումներուն դիմաց՝ Աստուած միայն հաւատարմութիւն կը պահանջէր իրեն հանդէպ:

Բայց նոյն Հին Կտակարանին մէջ Աստուած արդէն նոր խոստումով մը ակնարկած էր կնքուելիք Նոր Ուխտի մը մասին: «Ահա՛ օրեր կու գան, - կ'ըսէ Տէրը, - Որ Իսրայէլի տան հետ եւ Յուդայի տան հետ նոր ուխտ մը պիտի կնքեմ: Ո՛չ թէ այն ուխտին պէս, զոր անոնց հայրերուն հետ ըրի այն օրը երբ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք Եգիպտոսի երկրէն հանելու համար, որովհետեւ անոնք իմ ուխտս դրժեցին ու ես մերժեցի զանոնք, - կ'ըսէ Տէրը, - Այլ այն օրերէն ետք Իսրայէլի տան հետ իմ կնքելիք ուխտս սա՛ է, - կ'ըսէ Տէրը, - իմ Օրէնքս պիտի դնեմ անոնց ներսիդին, անոնց սրտին վրայ պիտի գրեմ զայն, ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ, եւ անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան: Անկէ ետք ոեւէ մէկը իր ընկերոջ կամ իր եղբօր պիտի չսորվեցնէ՛ ըսելով. «Տէ՛րը ճանչցիր», այլ անոնք պզտիկէն մինչեւ մեծը՝ բոլորն ալ զիս պիտի ճանչնան, - կ'ըսէ Տէրը, - որովհետեւ անոնց անօրէնութիւնը պիտի ներեմ եւ անոնց մեղքը անգա՛մ մըն ալ պիտի չյիշեմ» - Երեմ. ԼԱ. 31-34: Եւ այդ Նոր Ուխտը կնքուեցաւ Քրիստոսի արիւնով, որ թափուեցաւ «չատերու մեղքերու թողութեան համար» - Մատթ. ԻԶ, 28: Այս Նոր Ուխտով Յիսուս իր ժողովուրդին (այսինքն՝ Եկեղեցիին) կու տար արդարութիւն, Ս. Հոգիի պարգեւը, եւ յաւիտենական կեանքի ժառանգութեան խոստումը:

Արդ, Նոր Կտակարանով՝ Քրիստոսի կնքած Նոր Ուխտն ալ՝ իբրեւ Աստուծոյ խօսք ու խոստում՝ արձանագրուեցաւ առաքելական դարուն, եկեղեցւոյ մէջ կենդանի քարոզութեամբ ստեղծուած աւանդութեան հիմամբ: Այսպիսով Նոր Կտակարանը եւս դարձաւ մաս Աստուծոյ գրաւոր Խօսքին:

Դ. - ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍԲԸ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԵԿԵՂԵՑԻՈՎ

Իսկ այնուհետև Աստուած խօսեցա՞ւ, եւ կը խօսի՞ր այսօր: Այս հարցումներուն պատասխանը կու տայ Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ կեանքը, անոր պատմութիւնը, որ Աստուծոյ խոստումին իրականացման պատմութիւնն է:

Քրիստոսով իրականացան այն խոստումները՝ զորս Աստուած տուած էր Աբրահամի եւ Դաւիթի: Անոնց մարմնաւոր շառաւիղը, իր քաւաքար մահէն ետք, հրաշափառ յարութեամբ գնաց իր Հօր մօտ՝ առնելու համար իր անվախճան թագաւորութիւնը, եւ իր բերած փրկութեան օրհնութիւնը տարածեց բոլոր ազգերուն վրայ: Այս էր առաքեալներու քարոզութեան ողնասիւնը: Այսպէս կը քարոզէր, օրինակ, Պօղոս՝ Պիսիդիայի Անտիօք քաղաքին մէջ, ուր կ'ըսէր. «Մե՛նք ալ, ահա՛, ձեզի կ'աւետենք թէ Աստուած մեր հայրերուն տուած իր խոստումը կատարեց մեր օրերուն, որ անոնց զաւակներն ենք: Այդ խոստումը կատարեց՝ Յիսուսը յարուցանելով, ինչպէս երկրորդ Սաղմոսին մէջ ալ գրուած է. “Իմ որդիս ես դուն, այսօր քեզ ծնայ”: Նոյն այն իրողութիւնը, թէ Աստուած զայն մեռելներէն յարուցանեց եւ անիկա այլեւս բնաւ մահ պիտի չտեսնէ, խոստում մըն է՝ մեզի ուղղուած, որովհետև Աստուած այսպէս կ'ըսէ. “Ձեզի պիտի տամ այն իսկական օրհնութիւնը՝ զոր Դաւիթի խոստացայ”» - Գործք ԺԳ. 32-34: Իսկ Գաղատացիներուն գրած իր Նամակին մէջ կ'ըսէր. «Քրիստոս մեզ գնեց եւ ազատեց Օրէնքին անէծքէն՝ ինք մեզի համար անէծք ըլլալով ... որպէսզի Աբրահամի խոստացուած օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով, եւ մենք ալ խոստացուած Հոգին ստանանք հաւատքով» - Գաղ. Գ. 13-14:

Յստակ է թէ խոստումը չէր եղած Քրիստոսի, հապա՛ մեր հաւատքի հայրերուն, նաեւ մեզի, այլ խօսքով՝ Քրիստոսի Եկեղեցիին: Եւ առաջին բանը՝ զոր ան կը ժառանգէր այդ խոստումներուն հետ եւ այդ խոստումներով՝ Աստուծոյ կենդանի խօսքն էր: Եկեղեցին այդ խօսքը կը ժառանգէր ո՛չ միայն Յիսուսէ, այլ նաեւ՝ իր խոստումին համաձայն՝ Ս. Հոգիէն: Աստուած կանուխէն խոստացած էր իր Հոգին՝ ըսելով. «Վերջին օրերուն», - այսինքն երբ իր կողմէ սահմանուած ժամանակը գար, - «Իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները պիտի մարգարէանան, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի ունենան, եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն» - Յովել. Բ. 28: Իսկ Քրիստոս իր Եկեղեցիին ըսաւ. «Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, զոր Հայրը ձեզի պիտի զրկէ իմ անունովս, անիկա ամէն ինչ պիտի սորվեցնէ ձեզի, եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի» - Յովհ. ԺԳ. 26: Այդ խոստումին համաձայն՝ Ս. Հոգին Քրիստոսի Եկեղեցին մշտապէս կը լեցնէ Աստուծոյ խօսքով, կը սորվեցնէ եւ կը յիշեցնէ զայն, ու պտղաբեր կը դարձնէ եկեղեցւոյ կեանքին մէջ:

Բայց եկեղեցին ո՛չ միայն ժառանգորդն ու պահապանն է աստուածային խօսքին, այլ նաեւ զայն փոխանցողը եւ մեկնաբանողը: Արդարեւ, Ս. Հոգիով

Եկեղեցիին տրուած հոգեւոր պարգեւներուն մէջ առաջին տեղերը կը զբաւեն՝ իմաստութեամբ յորդորելու կարողութիւնը, հոգեւոր գիտութեամբ ուսուցանելը եւ մարգարէութիւնը (Ա. Կորնթ. ԺԲ. 8, 10): «Աստուած եկեղեցիին մէջ բազմաթիւ անդամներ կարգեց՝ զանազան ծառայութեանց համար. նախ՝ առաքեալները, երկրորդ՝ մարգարէները, երրորդ՝ վարդապետները ...» - Ա. Կորնթ. ԺԲ. 28: Առաքեալին պաշտօնը Աստուծոյ խօսքին ու կամքին յայտնութիւնը եւ փոխանցումն էր՝ քարոզութեամբ. մարգարէինը՝ Աստուծոյ պատգամներուն մեկնաբանութիւնը. իսկ վարդապետինը՝ բարոյական ուսուցումն ու յորդորը: Այս պաշտօններով, եւ յատկապէս մարգարէական պատգամախօսութեամբ, եկեղեցին ո՛չ միայն սոսկական կրկնողն է Աստուծոյ զբաւոր խօսքին, այլ Ս. Հոգիին մղումով եւ առաջնորդութեամբ՝ արտայայտիչը անոր կենդանի խօսքին, եւ ներշնչեալ մեկնաբանութեամբ՝ զայն մշտանորոգ բխեցնողը:

* * *

Աստուած այսօր ալ կը խօսի մեզի ու մեր միջոցաւ՝ ամբողջ մարդկութեան: Մենք բնաւ չենք կրնար ըսել թէ Աստուծոյ խօսքը հեռու եւ անհասանելի է մեզի համար, որովհետեւ ինք պատասխան կու տայ՝ ըսելով. «Այս պատուիրանը որ այսօր քեզի կու տամ» շատ դժուար բան մը չէ, եւ հեռու ալ չէ քեզմէ: Ո՛չ երկինքն է՝ որ ըսես. «Ո՞վ երկինք պիտի ելլէ եւ զայն մեզի բերէ, որ լսենք ու կատարենք զայն». ո՛չ ալ ծովուն միւս կողմն է՝ որ ըսես. «Ո՞վ պիտի անցնի ծովուն միւս կողմը եւ զայն մեզի բերէ ու լսելի դարձնէ, որ կատարենք զայն»: Այս պատգամը շատ մօտիկ է քեզի. քու բերնիդ ու սրտիդ մէջ է, եւ քու ձեռքդ է զայն կատարելը» - Բ. Օրին. Լ. 11-14:

Լսե՛նք առաքելական ազդարարութիւնը. «Զգո՛յ՛ջ եղէք, որ չըլլայ թէ մերժէք Աստուծոյ խօսքը լսել, որովհետեւ եթէ անոր հրամանները մարդոց փոխանցող Մովսէսին չհնազանդողները ազատում չունեցան, մենք բնա՛ւ ազատում չենք ունենար, եթէ կունակ դարձնենք Աստուծոյ՝ որ երկինքէն կը խօսի մեզի» - Եբր. ԺԲ. 25: Եւ, ի վերջոյ, գիտնանք թէ մեր ձեռքն է կեանքի ընտրութիւնը, որովհետեւ Աստուած մեզի կ'ըսէ. «Քեզի ձգեցի ընտրել կեանքը կամ մահը, օրհնութիւնը կամ անէծքը: Կեանքը ընտրէ, որպէսզի թէ՛ դուն ապրիս, եւ թէ՛ քու սերունդդ: Սիրէ՛ քու Տէր Աստուածդ, հնազանդէ՛ անոր խօսքին եւ հաւատարի՛մ մնացիր անոր, որովհետեւ անկէ կախում ունի քու կեանքդ» - Բ. Օրին. Լ. 19-20:

ԶԱՐԵՀ ԵՊՍ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

ՅԱՄԵՑՈՂ ԳԱՐՈՒՆԸ

Այդ դժուար տարիներին անգամ վեհափառութեան պատիւը դեռ շարունակում էր մնալ իր վեհութեան պատուանդանին:

Գարունը յամենալով էր գալիս: Յրտաշունչ ձմեռը դեռ զգացնել էր տալիս իր խստագէտ ներկայութիւնը:

Ծաղկազարդի երեկոն էր: Իր հին փառքից ու պաճուճանքից մերկացած, ասես անպատեհ ժամին յայտնուած մարդկային մի խլեակ, երերուն քայլուածքով ու դէմքի մռայլ արտայայտութեամբ վեհարանի հին շէնքից իջնում էր Մայր Տաճար:

Կրօնական հալածանքների ու անհաւատութեան լայնատարած այդ ժամանակաշրջանում աղօթքի այդ տունը մնացել էր կանգուն՝ իբրև կենդանի վկայ լեռնակուտակ անարդարութիւնների եւ անցեալի տխրահռչակ դէպքերի: Այդ բոլորով հանդերձ նա վկան էր նաեւ խիզախ մաքառումների ի խնդիր քրիստոնէական հաւատի եւ ազգային սրբութիւնների անաղարտ պահպանման: Նոյնիսկ նշուած այդ դժբախտ օրերին դեռ գոյութիւն ունէր հրաշքի զօրութիւնը, քանզի բոլորովին չէր հանգել Մայր Տաճարում պլպլացող հայ ժողովրդի հաւատի սրբազան կանթեղը:

Ժամանակի ոգուն անյարիր, զառամեալ եկեղեցականների այդ նուազկուն թափօրի առաջնորդն էր նոյնինքն Ամենայն հայոց Գէորգ Զ. կաթողիկոսը, որի դէմքի զսպուածութիւնը, տառապանքից ու սովից կմախք դարձած կերպարանքը, դէպի հեռուները սեւեռուած թախծոտ նայուածքը ներկայացնում էին պատկերը մի գերբնական, անդրաշխարհային անձնաւորութեան, հին դարերի խորքից եկած ու միայն իրեն յայտնի ուղղութեամբ գնացող մի յաւիտենական ու յաւերժախորհուրդ ճամբորդի:

Խումբը մուտք գործեց Մայր Տաճար, ուր, աւանդութեան համաձայն, իջել էր Քրիստոս: Ի յիշատակ այդ իրողութեան տաճարի կենտրոնում կանգնեցուած էր մարմարեայ մի յուշարձան՝ յայտնի Իջման Ս. Սեղան անունով, որի շուրջը լորը, գեղակերտ սիւների վրայ բարձրանում էր մի փառաւոր գմբէթ՝ գունագեղ նախշերով ու Աստուածամօր մանրանկարով (այն այսօր իր տեղում չէ): Քառանկիւն սեղանը խորհրդանշում էր երկիրը, իսկ սիւների վրայ հանգչող գմբէթը՝ երկնքի նախադուռը: Սեղանից դէպի երկնապլաց գմբէթ եւ այնուհետեւ դէպի աստուածային անհունութիւններն էին բարձրանում հաւատացեալների մաքուր սրտերի բոլորանուէր աղօթքն ու պաղատանքը:

Հայրապետը տեղ գրաւեց Ս. Սեղանի դիմաց: Նրա շուրջը կանգնած էին մի քանի շփոթահար եկեղեցականներ, որոնցից յատկապէս երեքն ապրում էին իրենց կեանքի մայրամուտը, իսկ մնացածները բուռն հալածանքների օրերին հրաժարուել էին հոգեւոր կարգից, այլապէս իրենց բազմաթիւ պաշտօնակիցների նման պիտի աքսորուէին կամ էլ գնդակահարուէին: Բայց երբ մի քիչ մեղմացել էին պետութեան կողմից գործադրուող անմարդկային ճնշումները

հոգեւորականների վրայ, կաթողիկոսը համոզել էր վերջիններին վերադառնալ իրենց առաքելութեանը: Այդուհանդերձ նրանց մտքից չէր հեռանում ձերբակալուելու վախն ու կասկածը:

Տաճարի ձախակողմեան դասում տեղ էին գրաւել հազիւ մի քանի տարի առաջ վերաբացուած Հոգեւոր ձեմարանի սակաւաթիւ սաները: Կային նաեւ մի քանի աղօթող կանայք, որոնց միայն մահը կարող էր բաժանել այդ սրբավայրից: Այնքա՞ն զօրաւոր էր նրանց կապը Աստծոյ հետ, որ այս աշխարհի խաւարչտին ուժերը ոչնչով չէին կարող ազդել նրանց հաւատի վրայ: Նրանք մեծ անձկութեամբ սպասում էին Աստծոյ հրաշքին, այնպիսի մի դարնան բացուելուն, որ իր հետ պիտի բերէր մեղմաշունչ զեփիւռների կախարդիչ հրճուանքը: Բայց այդ գարունը շատ էր ուշանում:

Իջման Սուրբ Սեղանի առաջ կանգնած՝ կաթողիկոսի փակ շուրթերը դժուարութեամբ շարժուեցին: Ոչ ոք չէր ակնկալում, որ նա մի բան կ'ասի, ոչ ոք չէր կարծում, թէ նա այդ պահին մտքով հետեւում էր եկեղեցական արարողութեանը: Լսուեց նրա առնական խրոխտ ձայնը.

– Երգի՛ր, տէր Նիկո՛ւլ, երգի՛ր...:

Տէր Նիկոլը, Էջմիածնի այդ ամենաձայնեղ շարականագէտը, լսելով իր անունը, սթափուեց մտածմունքներից, եկաւ խոնարհուեց հայրապետի առաջ, ապա շրջուեց դէպի Իջման Ս. Սեղանը, ծնրազրեց այնտեղ, խոր շունչ քաշեց եւ իր աստուածատուր ձայնով ու բացառիկ ներշնչանքով սկսեց երգել.

– Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց, զգուռն ողորմութեան...:

Ունկնդիրները համակուեցին մի սրբազան սարսուռով, յուզումից քարացան: Մեղեդու բառերը թէեւ աղաչական էին, բայց երգողի ձայնը անսպառ էր ու յաղթական: Թւում էր, թէ ամբողջ տաճարը երգի էր վերածուել. երգում էին եկեղեցու յարուսթիւն առած բոլոր սրբերը, երգում էին եկեղեցու նահատակները, աքսորուած ու անմեղօրէն զնդակահարուած քահանաները, նրանց անմխիթար այրիներն ու որբերը: Սակայն հայրապետի միտքն ուրիշ տեղ էր: Ոսկրացած դէմքի վրայ ոչ մի արտայայտութիւն, ոչ մի պրկում, հայացքն էլ բոլորովին անհաղորդ իրականութեան հետ:

Տէր Նիկոլն իր թոքերի ողջ ուժով կրկին անգամ սկսեց երգել «Բա՛ց մեզ, Տէ՛ր»-ը: Վեհափառն այս անգամ երկար նայեց ձեմարանի սաների կողմը, ապա դարձաւ դէպի խորան, մի փոքր ցնցուեց: Նրա մինչ այդ անհաղորդ ու անտարբեր կարծուած աչքերից արցունք էր հոսում: Դէմքը ողողուել էր սրբութեան ճաճանչով, ասես սրբալոյս միւռնոսով նորած սրբապատկեր լինէր: Սակայն ի՞նչն էր պատճառը նրա այդօրինակ յուզումի. ձեմարանի սաները դրանից շատ բան չէին հասկանում, բայց տարեց միաբանները իրենք էլ ապրում էին հայրապետի խռովքը:

Նրանք գիտէին, օրինակ, որ պետական հովանաւորութիւնը վայելող անհաւատութեան ալիքը ահաւոր վայրագութիւններ էր գործել եկեղեցու եւ եկեղեցական սպասաւորների հանդէպ: Նախորդ կաթողիկոսի դառնադէտ վախճանումից յետոյ պետութեան ծրագիրն էր թանգարանի վերածել Էջմի-

ածնի Մայր Տաճարը՝ հայ ժողովրդի հաւատի ամրոցն ու կանգուն մնացած միակ սրբավայրը ամբողջ Հայաստանում: Գէորգ Զ. Վեհափառը ոգի ի բռին պայքարում էր այդ հրեշտային ծրագրի դէմ: «Թող մեռնեմ, - ասում էր նա, - բայց չտեսնեմ էջմիածինը թանգարանի վերածուած»: Անհաւատութեան ոգով դաստիարակուած երիտասարդները դրսում Վեհափառին տեսնելիս՝ նոյնիսկ անարգում էին նրան: Մի օր, երբ նա դեռ եպիսկոպոս էր, գնացել էր բանաստեղծ եւ Գէորգեան ձեմարանի նախկին դասախօս Յովհաննէսեանին այցելելու: Նրա տունը վանքից շատ հեռու էր: Այդ նոյն երիտասարդները հայհոյանքներով յարձակուել էին նրա վրայ եւ եկեղեցականի սքեմը ամբողջութեամբ անարգել: Բանաստեղծի կիներ արցունքն աչքերին, իբրեւ Յիսուսի ոտքերը օծող մի նոր Մարիամ, սրբել էր հայ երիտասարդների թողած կեղտը Սրբազանի սքեմից: Խորապէս խոցուած էր Սրբազանի սիրտը, բայց էջմիածնի հանդէպ ունեցած նրա անսահման սէրը, ինչպէս նաեւ բարու եւ ճշմարտութեան յաղթանակի յոյսը երբեք չէին թողնում, որ նա վհատութեան մատնուի: Կաթողիկոս ընտրուելուց յետոյ էլ նրա անդուլ ջանքերի շնորհիւ միայն հնարաւոր դարձաւ վերաբացել էջմիածնի Հոգեւոր ձեմարանն ու մի քանի եկեղեցիներ:

Գէորգ Զ. կաթողիկոսը մեծութեան եւ արիութեան, իսկական վեհափառութեան խորհրդանիշ էր: Այս յատկանիշներով էր աւելի շատ պայմանաւորուած հայրապետի գերագոյն փառքը, քան նրա ունեցած աստուածաբանական ու երաժշտական խոր գիտելիքներով: Վեհափառը Յիսուսի նման նախատուած, բայց նրա նման էլ ժողովրդին սիրող մի անյիշաչար անձնաւորութիւն էր:

Հին ու վեհատեսիլ սրբապատկերների դէմքով Վեհափառ հայրապետը, Դոնբացէքի այդ երեկոյին, ո՞վ գիտէ, թէ ինչպիսի՜ խոսովալից մտածմունքներ ի մէջ էր: Նա զգում էր կարծես իր մօտալուստ վախճանը: Դրա համար էլ Դոնբացէքի մեղեդին հազիւ թէ աւարտուած, նա առանց իսկ նայելու երգողի կողմը, շշնջաց.

- Մի անգամ էլ երգի՛ր, Տէր Նիկոլ, մի անգամ էլ, գուցէ չհասնեմ գալիք Դոնբացէքին:

Տէր Նիկոլն իր փառահեղ ձայնով դարձեալ սկսեց «Բա՛ց մեզ, Տէ՛ր»-ը, որին յաջորդեց ձեմարանի սաների երգած շարականը, ուր աւետիսն էր տրւում մի նոր աւագանի հաստատման՝ մեր մեղքերի թողութեան եւ մեր սրտերի մաքրաջրման համար: Դա իրօք էլ այդպէս էր. վշտալի հայրապետի առաքինի ոգով դաստիարակուած այդ ճեմարանականներն էին, որ պիտի կարողանային քրիստոնէութեան աւագանի կենսահաղորդ ջրերում լուսնայ սրբութիւնները անարգողների հոգիները եւ չար գազանի թունալից նետերով խոցուած ու շատ անգամ նոյնպէս գազանացած մարդկանց դարչահոտ վէրքերը: Դա էր պատճառը, որ հայոց հայրապետը այդ երեկոյ նայում էր միայն երկու ուղղութեամբ՝ Իջման Սուրբ Սեղանի եւ ճեմարանականների, այսինքն՝ դէպի Աստուած եւ դէպի յուսալից ապագայ:

Գէորգ Զ. կաթողիկոսը չհասցրեց մասնակցել Դոնբացէքի յաջորդ

արարողութեանը: Իր խարխլած մեքենայի ետեւի նստարանին տեղաւորուած՝ մօտեցաւ Երեւանի գլխաւոր հրապարակին, ուր մարդկային ուրախ երուզեռ կար, եւ հրահանգեց վարորդին.

— Վազգէ՛ն, մի պահ կանգնի՛ր այստեղ, ուզում եմ հեռուից նայել, թէ ինչպէ՞ս են հազնուած մեր երիտասարդները, ինչպէ՞ս է նրանց առողջութիւնն ու տրամադրութիւնը:

Հրճուած էր հայրապետը՝ տեսնելով նոր սերնդին առողջ, ժիր եւ կենսախինդ: Սակայն այդ երիտասարդները կտրուած էին հայոց անցեալից, դարաւոր սրբութիւններից ու եկեղեցուց: Նրանցից մի քանիսը նշմարեցին կաթողիկոսին եւ սկսեցին հայհոյել «տէրտէրների» հասցէին...: Վարորդը քշեց մեքենան: Այս անգամ, սակայն, ծերունազարդ հայրապետը հառաչանքի ու ներքին տառապանքի ոչ մի ճիշ չարձակեց, այլ ինքնավստահ շեշտով ասաց.

— Ծեմարանի մեր տղաները անպայման կը կրթեն սրանց:

Մի քանի շաբաթ յետոյ, Ծեմարանի տղաներով շրջապատուած հայոց հայրապետը աւանդում էր հոգին՝ այնպէ՛ս խաղաղ, այնպէ՛ս հեշտ, որ կարծես թէ շտապում էր նորից քնել, որպէսզի տեսնի շարունակութիւնը կիսատ մնացած իր հիասքանչ երազի:

Այս դէպքը կատարուեց Մայիս ամսին: Հայաստանում պէտք է գարուն լինէր, բայց այդ իսկական գարունը յամենալով էր գալիս...:

Մոնթելլիտօ

ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան, ի՛մ հայրենիք, կարօտ ու ցաւ եւ խնդութիւն,
Որպէս շնչող ներկայութիւն, աշխարհի մէջ մի աշխարհ:
Հայաստան, անունդ անգամ հերոսական վեհութիւն,
Յուսոյ խորան մեր ինքնութեան եւ կացարան բարձրագահ:

Քեզ սիրեցինք նաեւ դժբախտ օրերիդ, երբ օտարի
Գարշելի թաթն էր քեզ ննչում ու բորենու քրքիջով
Անարգում էր անխղճօրէն սլացքը քո քաջարի
Երկնապարգեւ ինքնորոշման միշտ ցանկալի հետքերով:

Ու դիւցազուն քաջերիդ մահառումով անեղացունց
Փրկուած դու մի սուրբ մասունք, ի՛մ հայրենիք նուիրական,
Զաւակներիդ յար ուղեկցող ներշնչարան քաղցրահունչ,
Մեսրոպաշունչ մեր լեզուի մշտադալար դու օթեւան:

Ի՛մ պապերը տարագիր քեզ չտեսան, բայց սիրեցին
Նժդեհացեալ սրտերի հուրհրացեալ հրայրքներով,
Խորհուրդը քո գեղահրաշ փոխանցեցին սերունդներին,
Որ մեզ համար դու միշտ լինես հարազատ կանչ հոգեթով:

Ի՛մ հայրենիք հնամենի, լոյսի երկիր՝ Հայաստան,
Լուսաշող ջահ Լուսաւորչի մաքրաթեւ երազների,
Տանար Զուարթնոցի եւ Գեղարդի, դուռ անմահութեան՝
Բացուած սրտերին մեր հայտորտի եւ անպարտելի:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ԴՈՒ, ԻՄ ԵՐԿԻՐ

Երկի՛ր ի՛մ, դարաւոր եւ սուրբ :
Երկնաւրջ գագաթներիդ
Կախարդական հըմայֆներով,
Եւ բիւրեղեայ ակունքներիդ
Յաւերժաբուխ ու կենսատու,
Ջեղումներով երկնապարգեւ,
Հնադարեան գեղեցկութեամբ
Հոգիս գերուած է յաւիտեան :

Մատեաններդ շտեմարան
Իմաստութեան մեր սուրբ նախնեաց,
Որպէս սնունդ անմահական
Որդիներին մեր վեհապանծ :
Պատգամներդ ախորժալուր
Հերոսական ֆո պատմութեան՝
Հըրաւէր եւ զգաստութեան՝
Ողջ մարդկութեան խաղաղատենչ .
Չըշեղուելու երբեք բարուց,
Չըկորչելու երբեք անյոյս :

Դո՛ւ, ի՛մ երկիր, մնա՛ յաւէտ
Թատերաբեմ եւ օթեան
Սերունդներին մեր հայկական,
Եւ թող լինեն նըրանք պատրաստ
Դիմադրելու առիւծի պէս
Նենգ ու պատիր չար ոսոխի
Գըրոհներին դըժոխատես :

Պարտադրաբար հեռու քեզնից,
Բայց ես քեզնով եմ միշտ շնչում,
Ով ի՛մ երկիր յաւերժական,
Դո՛ւ ազատուած գերութիւնից,
Բայց ինձ գերած ֆո սրբութեամբ,
Աստուածատուր իմ էութեան
Երանաւէտ մաս անբաժան :

ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

LA MÈRE DE DIEU DANS LA LITURGIE ARMÉNIENNE (HYMNOLOGIE)

Pour la présente étude, je vais commencer par évoquer les noms des principaux livres liturgiques arméniens, le *Machtots*, le *Djachots*, le *Charaknots*, le *Tonakan* et le *Haysmavourk*, que nous avons consultés pour nos recherches relatives à *Marie dans la liturgie arménienne*.

Je vais aussi en donner une présentation succincte. La place de Marie dans la partie fixe de l'Office quotidien a été décrite par V. Tekeyan. Nous ne saurions élargir le débat sans nous référer à ces documents importants.

Le *Machtots* est ainsi appelé parce qu'on le considère comme remontant en partie à Mesrob-Machtots, l'inventeur de l'alphabet arménien au début du 5^{ème} siècle: il contient pratiquement le rituel et le bréviaire. Dès 1857, les Mékhitaristes de Venise ont étudié *Laudes et Hymni ad SS. Mariae Virginis — honorem ex armenorum Breviario excerpta Mechitaristicae Congregationis opera — latinitate donata*, avec une dédicace à Pie IX à l'occasion de l'Immaculée Conception.

Le *Djachots* provient du mot *Djachou* qui veut dire repas, parce que dans l'*octoechos* la septième voix a lieu entre la troisième et la quatrième heure, à l'heure du repas. Son hirme est seul à changer selon l'année liturgique. Le *Djachots* est le recueil de tous les versets hymniques selon l'année, et des indications de lecture. Il s'apparente étroitement au *Lectionnaire*, étudié par A. Renoux: ses racines plongent très loin dans la liturgie hiérosolymitaine dont les éléments très archaïques demeurent seulement chez les Arméniens.

Le *Charaknots*, gén. plur. de *Charakan*, vient du radical *char* «entraîner», et correspond à «*Hirmes*». Chacune des neuf Odes bibliques est adaptée au thème de la fête comme dans le canon grec, mais le *Djachou* y occupe la huitième place. La collection contient un peu plus de cent hymnes (il y a variations à la fin de diverses éditions). La première édition d'Amsterdam en 1702 a été suivie de bien d'autres. Celle de Constantinople en 1854 est la base de la traduction russe de N. Emin. Le Catholicossat de Cilicie en a donné une superbe édition en 1980. Le P. Gabriel Avedikian a publié à Venise en 1814 un *Batsatroutioun Charakanats*, ou Commentaire des Charakans. Les textes Mariaux y sont commentés p. 1-92 et 702-720.

Le *Tonakan* est le recueil des textes homilétiques selon les fêtes de

l'année. Il est étroitement lié aux autres livres. La plus ancienne forme semble être celle introduite par Salomon de Makenots en 747. Mais la similitude de structure avec le Mravalthavi géorgien, et le libellé explicite du titre Tonakan montrent qu'il utilise une collection antérieure originaire de Jérusalem, et formellement attribuée, comme le *Djachots*, à Cyrille de Jérusalem en 4^{ème} siècle et à Jacques, frère du Seigneur, premier évêque de Jérusalem. Les pièces mariales y relèvent de dates variées selon le *Tonakan* qui se diversifie vers le 15^{ème} siècle.

Le *Haysmavourk* enfin signifie littéralement «en ce jour»: c'est pratiquement l'équivalent du synaxaire grec. Ses notices sont en général des résumés, mais ils incluent parfois des homélies entières pour les fêtes.

L'héortologie mariale est dominée par un fait massif propre à l'Église arménienne; la célébration de la fête de l'Annonciation, de la Nativité et de l'Épiphanie à la même date du 6 Janvier, ce qui entraîne une longue suite de lectures mariales dès le début de l'année. Pour l'ensemble du cycle et son origine hiérosolymitaine, on peu consulter N. Adontz «Les fêtes et les saints dans l'église arménienne», complété par A. Renoux. La Chronique des patriarches publiée par Galano d'après un ms. datant de 1366 utilisait un modèle qui affleure également dans la *Narratio de Rebus Armeniae*: on y lisait que au 2^e concile de Dvin en 555 décida la conjonction de la fête de l'Épiphanie avec celle de la Nativité. En effet, la Naissance du Verbe rappelée à l'Épiphanie dans le Baptême, est identique à celle de Jésus à partir de Marie dans la fameuse formule attribuée à Cyrille d'Alexandrie: «Une seule nature du Verbe incarné après l'union».

Les Arméniens ont gardé aussi un petit texte sur la création du monde le mercredi, et l'Annonciation au mercredi (Matenadaran 948, fol. 37). Dans l'office journalier, la place du mercredi est demeurée liée à l'Annonciation. Le schème le plus élaboré de cette disposition se rencontre chez les Coptes. Cependant contrairement aux Coptes, les Arméniens n'ont rien gardé de la Dormition de la Vierge au 16-18 janvier. Le triduum se place se place entièrement au 15 août. Dans les pièces patristiques de la tradition mariale arménienne, pratiquement tous les textes s'inscrivent en janvier ou en août. Les textes qui échappent à cette règle appartiennent à des collections de type chalcédonien, une partie étant restée unie à Byzance, avant d'émigrer à Caffa en Crimée, puis à Lvov en Pologne. On notera que l'Annonciation dans plusieurs collections a cependant été mise au 6 avril, en correspondance avec la naissance au 6 janvier, mais ceci peut être une réaction tardive à l'installation de la fête du 25 mars par Justinien.

Dans notre étude nous avons délibérément laissé de côté la question de la présence liturgique de la Théotokos. Cette question nécessite un examen particulier. Pour la mariologie biblique de l'*Hymnaire* on peut consulter mon article, publié dans *Hask*. La liturgie arménienne connaît sept fêtes de la Mère de Dieu, tant historiques que votives. Son hymnographie mariale, où figurent les oeuvres des plus grands poètes, déborde largement le cadre des fêtes de Marie et se rencontre tout au long de l'année liturgique dans tous les offices, acolouthies et fonctions.

Des invocations partielles de l'intercession de la Vierge se trouvent aussi dans la Messe (*l'Introït, le Trisagion, le Credo, puis la Préface et la Consécration*) et le rituel (*la bénédiction des fiançailles, le Viatique, le Salut, la bénédiction du raisin en la fête de l'Assomption*). Ces passages mariaux sont un reste de la politique arménienne des premiers siècles. Nous avons abordé ailleurs la question de la présence de Marie par ses icônes. À mi-chemin entre le pseudépigraphe et l'apocryphe se situe à la *Légende* de Hogeats Vank selon laquelle Bathélémy aurait recueilli au moment de l'Assomption l'icône de la Vierge, et l'aurait porté ensuite en Arménie. Éditée sous forme de correspondance entre Sahak Ardzrouni et Moïse Khorenatsi (*BHO 662*), la légende n'en a pas moins des racines plus anciennes que cette forme littéraire du 11^{ème} siècle. Certains passages se retrouvent plus ou moins isolés, par ex. *Matenadaran 7443*, fol. 601-604. La légende utilisée par la correspondance est employée dans l'homélie sur la Dormition attribuée à Zacharie le Catholicos dans le *Tonapatdjar Matenadaran 1007*, 428-439. Il y a infiniment plus de textes qui concernent la fête de l'Assomption. Parmi les prières mariales de l'Office divin quotidien, on peut noter l'invocation solennelle de la Prière du repos (Complies): «Nous tombons devant vous, Mère de Dieu, et nous vous supplions Vierge Immuable: intercédez pour nous et priez votre Fils Unique qu'il nous sauve de la tentation et de tous les dangers.»

Les fêtes historiques de la Mère de Dieu sont apparues et se sont développées sous l'influence de l'inspiration donnée à la vénération de Marie par la proclamation dogmatique du Concile d'Éphèse (431). Effectivement, ces fêtes sont profondément influencées par la théologie de la maternité divine, mise en avant par le III^e Concile, et ainsi, par celle de l'incarnation du Verbe.

On peut s'en rendre compte par l'analyse du contenu théologique de ces fêtes d'après le texte de leurs canons que nous donne le Charaknots. Cet examen montre que l'élément hymnographique ou scripturaire de ces canons se relie à la fois au dogme de la maternité

divine et à celui de l'incarnation. Ajoutons que, dans certains textes, elle est très clairement présentée comme le sûr rempart de la vraie doctrine et comme celle qui affermit l'orthodoxie de la foi. Ainsi, nous lisons dans le Magnificat de l'Office du Matin du 24 Décembre:

«Réjouis-toi, Mère de Dieu qui es suprêmement bénie par les Séraphins. Faisant poindre de toi pour nous la lumière, tu es devenue la Mère de celui qui nous tire en haut. Nations et peuples, nous te magnifions.

Tu es devenue le fondement de l'Église; tu es devenue le tabernacle du Saint-Esprit; tu as été servie par les anges; Gabriel t'a porté la bonne nouvelle. Peuples et nations...

Nous voyons manifesté le mystère redoutable, merveilleux: ayant conçu de l'Esprit-Saint le Verbe Dieu, tu l'as enfanté selon la chair. Peuples et nations...»

Un chant très doux est celui de ce tropaire de l'Office du Matin du 2^e Jour de l'Épiphanie (7 Janvier).

«Lumière, Mère de Lumière et Demeure du Verbe vivifiant, tous les peuples et nations te proclameront bienheureuse.

Mère du Créateur et rénovateur de la forme vétuste, tous les peuples...

Une lumière s'est levée de toi pour nous qui étions assis dans les ténèbres. Tous les peuples...»

Une telle vénération de la Mère de Dieu dans l'orthodoxie arménienne est troublante pour certains, qui la rapprochent du paganisme. Anahide et d'autres divinités féminines en seraient des prototypes. Même en admettant que le paganisme avait des intuitions, la différence entre ses déesses et la créature parfaitement deifiée qu'est la Mère de Dieu est trop évidente pour qu'on puisse croire à une quelconque analogie. Au contraire, l'absence totale du principe féminin dans le sentiment religieux des protestants le rend un peu prosaïque. Par ailleurs, la sobriété spirituelle de l'Arménie s'oppose à la moindre tendance érotique dans la vénération de la Vierge, qui ne possède pas toutes les nuances que la chevalerie a imparties à son culte de «la belle dame» en Occident. Nous observons cependant qu'en dehors de ses superstitions, le paganisme était capable de percevoir d'importants signes avant-coureurs, comme une «ombre des choses à venir», lesquelles pouvaient même rester inconnues à l'église vétéro-testamentaire pour des raisons de pédagogie divine.

THAMAR DASNABÉDIAN

ՀԱՄՈՒՆԱԾ՝ «Mariologie de l'Église Arménienne Orthodoxe» գործեր,

ստանց ծանօթագրութիւններու :



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԵՆՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ